26.048

Գ. ՆԱՀԱՐՅԱՆ

# Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՀՄԱԿԵՐՊԵԼ ՈՒ ՏԱՆԵԼ ԿՈՐՊԽՄԲԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Պ. ՍՏԱՄԲՈԼՅՅԱՆԻ ՀԱՌԱՋԱԲԱՆՈՎ

334.5
Ն-15

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԿՈՈՊ"-Ի
ԵՐԵՎԱՆ — 1928

09.07.2013

15.

Ն-15 ար

Գ. ՆԱԶԱՐՅԱՆ

# ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՈՒ ՏԱՆԵԼ ԿՈՈՊԽՄԲԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1007
33973

Պ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ ՀԱՌԱՋԱԲԱՆՈՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԿՈՈՊ“-Ի
ՅԵՐԵՎԱՆ — 1928

2010

28.

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԷՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԷՊ. 605բ
ՏԻՐԱԺ 1000.

«...Մեզ „միայն“ մի բան է մնացել. մեր ազգաբնակությունն այնքան „խաղաքիրթ“ դարձնել, որ նա հասկանա կոոպերացիայի մեջ գլխովին մասնակցելու բոլոր ոգուտները յեվ գլուխ բերի այդ մասնակցությունը: „Միայն“ այդ: Ուրիշ իմաստություններ մեզ այլեվս հարկավոր չեն սոցիալիզմին անցնելու համար: Բայց, վորպեսզի այդ „միայնը“ կատարվի, հարկավոր է մի ամբողջ հեղաշրջում, վորոշ ժողովրդական մասսայի կուլտուրական զարգացման մի ամբողջ շրջան“:

ԼԵՆԻՆ—„Կոոպերացիայի մասին“:

# ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՊԱՌԿՈՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ

Սպառկոոպերացիայի կուլտ-կրթական աշխատանքները մեզ համար այժմ հանդիսանում են որվա ամենահրատապ և կարևոր խնդիրներից մեկը։

Մեր տնտեսական շինարարության վերելքը, նրա զարգացման թափը իր հետևումն է թողել լայն մասսաների կուլտուրական զարգացման մակարդակը։ Պարզ պետք է արձանագրվի, որ մենք մեր տնտեսական շինարարության գործում շատ ավելի բան ենք կատարել, քան կուլտուրական աշխատանքների ճակատում։ Այդ յերկու՝ մեկը մյուսի հետ սերտորեն շաղկապված աշխատանքների մեջ չկա անհրաժեշտ ներդաշնակություն։ Ընկեր Կրիժանովսկին 15-րդ համագումարում ասում է. «Վճռական լոզունգն այսպես է՝ մենք պետք է մեր սոցիալ-կուլտուրական ֆրոնտն ուղղենք մեր ինդուստրալացման ֆրոնտի համեմատ»։ Նույն հանդամանքի վրա իր ուշադրությունն է դարձնում նաև ընկեր Ռիկովը ասելով, որ «...Չի կարելի տնտեսական հեղափոխությունը զատել կուլտուրական հեղափոխությունից։ Մկրատն այս ասպարիզում կարող է շատ թանկ նստել։ Այժմ մենք տնտեսական զարգացման այնպիսի մի շրջան ենք ապրում, որ իսկապես շատ դժվար կլինի հետագա նոր նվաճումները, յեթե մենք լրջորեն չմտածենք մեր շինարարությանը մասնակցող մասսաների կուլտուրական

մակարդակը բարձրացնելու մասին։ Այս իրողությունը մանավանդ առաջին հերթին վերաբերում է սպառողական կոոպերացիային։ Սպառողական կոոպերացիան մեր տնտեսական շինարարության մեջ հանդիսանում է ամենամասսայական կազմակերպություններից մեկը։ Նա տնտեսական խոշոր նվաճումներ է ունեցել և այժմ մեր ներքին առևտրի մեջ նա հանդիսանում է ամենահզորագույն կազմակերպություններից մեկը։ Առևտրի 50%-ը գտնվում է նրա ձեռքին, ազգաբնակության կոոպերացումը նույնպես հասնում է 50%-ի։ Այդ հանգամանքն ինքնին ցույց է տալիս, թե սպառկոոպերացիայի աշխատանքներին որքան լայն մասսաներ են մասնակցում։ 1927—28 տնտ. տարվա մեր սկզբնական ցանցի հաշվետու վերընտրական կամպանիայի ընթացքում, կոոպերացված մասսաները չտեսնված ակտիվություն և շահագրգռություն ցուցաբերեցին հատուկ շեշտով արձանագրելով մեր կուլտկրթական աշխատանքների թուլությունը, անդամ նրա բացակայությունը։

Այդպես շարունակել չենք կարող այլևս։

Սպառողական կոոպերացիան այժմ ապրում է համեմատորեն զարգացման բարձր շրջան, նրա առաջ դրված են աշխատանքի ռացիոնալացման, առևտրի տեխնիկայի կատարելագործման կոոպերատիվ անդամի ակտիվ և գիտակից մասնակցության խնդիրներն իր կոոպերատիվի գործերի մեջ, զեկավար մարմինների (վարչությունների, վերստուգիչ և խանութային հանձնաժողովների) համար պահանջվում է աշխատողների բարձր վարակ և այլն, և այլն։ Այս բոլոր մեր հետագա զարգացման համար կենսական նշանակություն ունեցող ձեռնարկներն իրագործելիս մենք հանդիպում ենք անհամար դժվարությունների և այդ դժվարությունների գլխավոր աղբյուրը հանդիսանում է մեր անկուլտուրականությունը։ Ընկեր Մոլոտովը 15-րդ կուսհամագումարում շատ ճիշտ կերպով ասում է. «Կուլտուրա, դարձյալ և դարձյալ կուլտուրա։ Բառացի կերպով ամեն ինչ այժմ կուլտուրայի պակասություն է դեմ առնում գյուղում։ Մոռացեք, որ ճյուղին կցանկանաք՝ մեր անկուլտուրականությունը՝ հետամնացությունը, իսկ յերբեմն էլ ուղղակի վայրենությունը, մեզ հնարավորություն չեն տալիս լայնորեն բացել այն նորը, որ գոյություն ունի գյուղում»։

Բացի այն նոր բարձր պահանջները, որ մեզ առաջադրում է մեր սոցիալիստական շինարարության հատուկ զարգացման թափը, դեռ ևս մենք որքան բազմաթիվ թերություններ ու մինչև իսկ հանցանքի հասնող պակասություններ ունենք, որոնք խանգարում են, դանդաղեցնում են մեր հետագա նորմալ զարգացմանը։

Մեր կոոպերատիվների գործակատարների մեծ մասը հին չարչիական սովորություններից դեռ չեն ազատագրված—նրանք անգրագետ են, մեր նախագահներից շատերը պարզորեն դեռ ևս չեն ընդգրկում մեր կոոպերացիայի թե քաղաքական և թե գործնական շատ խնդիրները, մեր վերստուգիչ և խանութային հանձնաժողովները մեծ մասամբ անգործունեության են մատնված և չեն հասկանում հասարակական կոնտրոլի կենսական նշանակությունը, մեր կոոպերատիվի անդամները անգրագետ են և ծանոթ չեն կոոպերատիվի կանոնագրության հետ և նման մեծ ու փոքր պա-

կասությունները ինչքան ուզեք։ Եվ այս բոլորը հետևանք է մեր ընդհանուր անկուլտուրականության։

Մենք պետք է անողոք պայքար հայտարարենք մեր անկուլտուրականության դեմ և պետք է այդ ուղղությամբ գործնական աշխատանքի անցնենք։ Այլևս ընդհանուր խոստումները և հավաստիացումները մասսաներին բավարարել չեն կարող։ Մինչև այժմ կուլտուր-կրթական ասպարիզում կատարած մեր աշխատանքները շատ քիչ են։ Վերջիններիս համար մենք ունեցել ենք մինչև իսկ ֆինանսական հնարավորություն՝ ոգուտներից հատկացված ֆոնդեր, սակայն մեր անշնորքության պատճառով չենք կարողացել ոգտագործել իր նպատակին և ֆոնդերի մեծ մասը մնացել է չգործադրված։ Կուլտ-կրթական աշխատանքների գոյությունն ապահովելու համար այժմ կուրս է վերցրված ոչ միայն բավականանալ ոգուտներից հատկացումներ անելով, այլ և նախահաշվային կարգով նախատեսել այդ նպատակի համար վորոշ գումար։ Այդ կուլտ-կրթական աշխատանքների համար ֆինանսական բազա ստեղծելու անհրաժեշտության մասին ընկ. Ռիկովը պարզ ու վորոշ ասում է. «Ցեսդոնում եմ, վոր մեր բյուջեյի, մեր միջոցների հետագա զարգացման հետ, սկսած հենց մոտակա տարուց, մենք պետք է համեմատաբար շատ հատկացնենք կուլտուրական զարգացման գործին, քան նույնիսկ տնտեսական վերականգնմանը»։ Այսպիսով մենք տեսնում ենք կուլտ-կրթական աշխատանքների համար անհրաժեշտ նախապայմաններ կան, հարկավոր է միայն առանց ուշանալու անցնել գործի։

Սպառկոոպերացիայի կուլտ-կրթական աշխա-



տանքները տեղի է ունենում յերեք հիմնական ճանապարհով։ Առաջին՝ . կոոպերատիվ աշխատակիցների վերապատրաստման—կարճատև դասընթացքներ կազմակերպելու միջոցով։ Յերկրորդ՝ հրատարակչական աշխատանքների, վորը արտահայտվում է անհրաժեշտ գրականության, թե մատչելի և թե մասնագիտական գրքերի, հրատարակությամբ։ Յերրորդ՝ մասսայական ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքներ։ Աշխատանքի այս ընդգավառն է շատ բազմազան, ծավալը մեծ և մեծ մասսա ընդգրկող։ Թվածս աշխատանքների մեջ քիչ թե շատ խորացած գործունեություն տանելու տեսակետից սովորելու ծարավ կոոպերատիվ ակտիվի համար հանդիսանում է խմբակային պարապմունքները։ Այդ և պատճառը, վոր խմբակային պարապմունքները մասսայական կուլտ-կրթական աշխատանքների մեջ հանդիսանում են ամենալավագույն մեթոդը, վոր տալիս է շոշափելի արդյունքներ։ Մեր կոոպերատիվներն այդ խմբակային պարապմունքներն անցնելու համար ունեն անհրաժեշտ նախապայմաններ։ Սովորել ցանկացող ակտիվ բավական չափով ունենք—կանաչ ֆինանսական միջոցներ անհրաժեշտ ծախսերի համար։ Խմբակային պարապմունքների հաջողության համար դժվարությունները հանդիսանում են պատրաստված և փորձված պարապողների գոյությունը։

Անշուշտ այդ հարցում մենք կունենանք դժվարություններ, սակայն այդ դժվարությունները հաղթահարելի են։ Ամենուրեք տեղերում մենք ունենք բավական չափով պատրաստված ընկերներ։ Կարելի է

այստեղ մեկ առ մեկ թվել։ Գավկոմների և շրջկոմների անդամները, գյուղական ինտելիգենցիան—ուսուցիչը, գյուղատնտեսը, բժիշկը և խորհրդային այլ պատասխանատու աշխատակիցը։ Այնուհետև կոոպերատիվի նախագահներից և պատասխանատու աշխատակիցներից շատերը, կարելի է մեծ չափով ոգտագործել նաև խրճիթ-ընթերցարանների վարիչներին։ Կոոպերատիվ խմբակային պարապմունքները ղեկավարելու համար այդ ուժերը պետք է ոգտագործվեն։

Վորպեսզի հնարավոր լինի նրանց ոգտագործումը, անհրաժեշտ է պարապմունքները դնել գործնական հողի վրա և կազմակերպչորեն նախատեսել բոլոր մանրամասնությունները։ Կոոպերատիվի վարչությունը կամ կուլտ-կրթական աշխատանքների համար ընտրված հանձնաժողովները նախապես պետք է պայմանավորվեն այս կամ այն պատրաստված ընկերոջ հետ, ճիշտ ժամեր վորոշեն, ունենան անհրաժեշտ գրականություն, իսկ այդպիսին արդեն բավական չափով կա. հետևել, վոր նշանակված ժամերին ներկա լինեն, թե լսողները և թե դասատուները՝ անպայման ստեղծել այնպիսի տեխնիկական հարմարություններ, վոր պարապմունքները նորմալ ընթանան։ Եթե գործի սկզբից կոոպերատիվի կողմից լինի թույլ վերաբերմունք գործ առաջ չի գնա։ Եվ յեթե մենք այս խմբակային պարապմունքների վրա լուրջ ուշադրություն դարձնենք և յերևան հանենք վորոշ համառություն անպայման մենք կունենանք հաջողություններ։ Ժամանակի ընթացքում կստեղծվի պարապողների մշտական կադր։ Այնուհետև հենց այդ մշտական պարապողների վորակը բարձրացնելու և մեթոդական խնդիրները վորոշելու համար, հնարավոր կլինի գավառական և մինչև իսկ Համահայատանյան խորհրդակցություններ և կարճատև դասընթացքներ կազմակերպել։ Այդ դասատուների համար այստեղ կարիք չկա խմբակային պարապմունքների մեթոդական և կազմակերպչական խնդիրների մասին մանրամասն կանգ առնել, քանի վոր ընկեր Նազարյանի այս գրքույկը, վոր ժողովածու է այդ մասին մեր գծով հրատարակված ռուսերեն մի քանի ձեռնարկների—մանրամասն և գործնականորեն սպառում է շոշափված խնդիրները։

Կարծում ենք, վոր մեր հրատարակած այս ձեռնարկը բավականին լուրջ ոժանդակություն ցույց կը տա տեղերում թե խմբակային պարապմունքներ կազմակերպողներին և թե դասատուներին։

Միայն անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն և մեծ յեռանդ մեր կոոպերատորների կողմից դեպի կուլտ-կրթական աշխատանքները։

Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

## I. ԿՈՊԵՐԱՏԻՎ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոոպերացիան մասսայական կազմակերպություն է և վորպես այդպիսին իր բոլոր աշխատանքները տանում է կոոպերացված մասսաների անմիջական մասնակցությամբ և նրանց միջոցով։

Հատկապես այդ վերաբերվում է կոոպերացիայի կուլտ-լուսավորական աշխատանքներին։ Այս բնագավառում արդեն շատ կարևոր է կոոպերացված մասսաների ինքնագործունեությունը և այդ ինքնագործունեության այն բոլոր ձևավորումները, վորոնք վորպես հիմնական նպատակ հետապնդում են կոոպերացման թափն ուժեղացնելը, կոոպերատիվ անգրագիտության վերացումը, կոոպերացիայի շարքային անդամների ակտիվացումն ու կոոպերացիայի ընթացիկ կյանքին նրանց տեղյակ դարձնելն ու մասնակից անելը։

Այս մտքով կոոպերատիվ լուսավորական աշխատանքների ձևերը շատ բազմազան են և նայած թե նրանք ինչ հիմնական նպատակ են հետապնդում՝ նրանց բովանդակությունն ու ծրագիրը շատ են տարբեր։

Մենք կանդ կառնենք այն աշխատանքների գլխավոր ձևերի վրան՝ մատնանշելով այն հիմնական նպատակները, վորին ձգտում են առանձին ձևերի լուսավորական աշխատանքները։

## 1. ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵՋ

Այս աշխատանքի հիմնական բովանդակությունն է՝ ա) կոոպերացված և վոչ կոոպերացված մասսաներին տեղյակ դարձնել կոոպերատիվ շինարարության նպատակներին. բ) զարկ տալ մասսաների լրիվ կոոպերացման գործին ագիտացիայի ու պրոպագանդայի բոլոր ձևերով. գ) ծանոթացնել լայն մասսաներին կոոպերացիայի ձևերի, պատմության, նրա ներկա դրության հետ. դ) գործնականորեն կապել այդ մասսաներին սեփական կոոպերատիվի կյանքի հետ՝ ցուցադրելով նրա նվաճումները, քննադատելով նրա բացերը. յ) կազմակերպված մասնակցություն ցույց տալ կոոպերատիվի ընթացիկ կյանքին՝ նրա հաշվետու-վերընտրական և փայավճարային կամպանիաներին, այլ և կոոպերացիայի միջազգային որվա և այլ տոնակատարություններին և, վերջապես զ) առաջ քաշել իր միջից կոոպերատիվ ակտիվ՝ ընտրությունների ժամանակ նրանց լիազորների ժողովի, խանութային հանձնաժողովների և սեփական կոոպերատիվի ապարատում աշխատացնելու նպատակներով։

Վերոհիշյալ նպատակները հաջողությամբ իրականացնելու համար, նայած յուրաքանչյուր կոոպերատիվի տեղական պայմաններին ու դրամական հնարավորություններին, այլ և կոոպերատիվ լուսավորության աշխատողների ուժերին — կազմվում է համապատասխան ծրագիր և տարվում է համապատասխան աշխատանք։

Հատկապես հիշատակելու ենք կոոպերատիվ



կուլտուր-լուսավորական մասսայական աշխատանքների հետևյալ ձևերը։

ա. Լայն մասսաների համար զրույցների, դասախոսությունների, զեկուցումների, հարց ու պատասխանների յերեկոների, ագիտ-դատերի, ներկայացումների ու գրական յերեկոների կազմակերպում։

բ. Կինո նկարների, մոգական լապտերի, դիագրամմաների միջոցով կոոպերացիայի նվաճումների ու հաջողությունների ցուցադրում։

գ. Կոոպերատիվ խանութին կից գիր ու գրենական պիտույքների մշտական վաճառքի կազմակերպում, իսկ յեթե այդ հնարավոր չե — կոոպերատիվ գրականության տարածումը կոոպերատիվ տոներին ու հաշվետու-մասսայական ժողովների ընթացքում։

դ. Բանվորական ակումբներին ու խրճիթ-ընթերցարաններին կից կոոպերատիվ անկյունների, այլ և կոոպերատիվ ինքնակրթության խմբակների կազմակերպումը։

յ. Կենդանի լրագրերի ու պատի լրագրերի հրատարակություն, այլ և գոյություն ունեցող պատի լրագրերի մեջ հատուկ կոոպերատիվ սյունակի խմբագրումը։

զ. Կոոպերատիվ մանկական տոների կազմակերպում և աշխատանքային դպրոցների աշակերտական կազմակերպությունների ու տեղական կոոպերատիվի մեջ փոխադարձ կապի ամրացում և

ե. Հատուկ աշխատանքների կազմակերպում յերիտասարդության, կանանց և գյուղական չքավորության կոոպերացման նպատակներով։

Մենք սահմանափակվում ենք միայն այս ձևերը թվելով. տեղերի աշխատողների նախաձեռնությունը միշտ էլ կարող է կուլտ-լուսավորական մասսայական աշխատանքների նորանոր ձևեր ու նոր բովանդակություն փնտռել և գտնել։ Անհրաժեշտ է միայն ինքնագործունեություն։

## 2. ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Կոոպերատիվ կուլտ-լուսավորական մասսայական աշխատանքներին զուգահեռ և նրանցից վոչ պակաս անհրաժեշտ է կոոպերացիայի աշխատողների պատրաստման ու վերապատրաստման աշխատանքների կազմակերպումը։

Մեր կոոպերացիայի բոլոր ձևերն էլ (սպառողական, գյուղատնտեսական, տնայնագործական, բնակարանային) այնքան արագ թափով են զարգանում և նրանց աշխատող կադրերի թիվն այնպիսի արագությամբ է աճում, վոր անհրաժեշտություն է առնում մի կողմից նոր աշխատողներ պատրաստելը, մյուս կողմից՝ ներկայումս աշխատող կոոպերատորների վերապատրաստումը։

Մինչդեռ մասսայական աշխատանքները նպատակ ունեն կոոպերատիվ գիտակցության և հասարակական ինքնագործունեության համար լավագույն



պայմաններ ստեղծել՝ զարկ տալով հենց այդ ինքնագործունեությանը, կոոպերատիվ աշխատողների պատրաստման ու վերապատրաստման կոնկրետ նպատակները բոլորովին այլ են և հենց դրված նպատակներից էլ բղխում է այդ աշխատանքների բովանդակությունը։

ա. Կոոպերացիայի աշխատողների վորակի լավացման խնդիրը առաջադրում է այդ աշխատողների տարբեր խմբերի (վարչության, վերստուգիչ հանձնաժողովի, խանութային ու ճաշարանային հանձնաժողովների անդամների, հաշվետարների, գործակատարների, պահեստապետների) ունեցած գիտելիքների ու փորձառության լրացում կարճատև համագումար-դասընթացներում։ Վերջիններս կարող են կազմակերպվել գավառական, գավառակային ու ավելի փոքր շրջաններում, նույնիսկ մեծ բազմախանութների համար առանձին-առանձին։ Այս դասընթացների ծրագիրն ու բովանդակությունը գործնական խնդիրներն են և հատկապես աշխատանքային տեխնիկայի լավացման ու կատարելագործման խնդիրները։

բ. Կոոպերատիվ հատուկ դասընթացների կազմակերպումը նպատակ ունի կոոպերացիային մատակարարել վորակավոր աշխատողների նոր կադրեր (հաշվապահներ, վարչության անդամներ, հրահանգիչներ և այլն)։ Այդ կուրսերը լինում են փոքր շրջանների (նահանգական, հանրապետական) և ավելի մեծ շրջանների (յերկրային, համամիութենական) ծավալով՝ միամյա, երկամյա և նույնիսկ քառամյա։ Այս կուրսերը

33973

պահվում են կոոպերատիվ կենտրոնների միջոցներով։

Բոլորովին հատուկ տեղ են բռնում այն կուրսերը (դասընթացները), որոնք ղեկավարվում են կոոպերատիվ կենտրոնների կողմից տպագրված դասախոսությունների փոստով ուղարկելով։ Այս դասընթացները շատ եժան են, սովորողները բոլորովին չեն կտրվում իրենց ընթացիկ աշխատանքներից և ինքնակրթությամբ զբաղվելու համար (թե խմբական և թե անհատորեն) ամենանպատակահարմար ձևն են։

Առանձնապես հանրածանոթ են Ցենտրոսոյուզի կոոպերատիվ դասընթացները, որ յերրորդ տարին է գործում է Համամիութենական ծավալով։ Նրանց մասին մանրամասն տեղեկություն կարելի յե ստանալ Հայկոոպի կազմ-բաժնից կամ ուղղակի դիմելով հետևյալ հասցեյով՝ Москва, Центросоюз. Заочные кооперативные курсы.

## 3. ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Ժողովրդական լուսավորության գործը մեր դպրոցներում դրված է աշխատանքային հիմունքների վրա։ Դպրոցականը հաճախելով դպրոց, մի քանի տարի դպրոցի պատերում անցկացնելով և ավարտելով 2-րդ աստիճանը՝ անհրաժեշտորեն կյանքի յե դուրս գալիս որևե արտադրական աշխատանքի թեքում ունենալով։ Ցեթե նա չորոշակիորեն յի բարձր ուսումը—



նա այդ սկզբնական թեքումի մասնագիտացումին է ձգտում։ Մեր ժողովրդական լուսավորության այդ ընույթից ե բղխում հենց այն հանգամանքը, որ մեր դպրոցական բազմազան թեքումների մեջ—Լուսժողկոմատի յերկրորդ աստիճանի աշխատանքային մի շարք դպրոցներ ունենում են կոոպերատիվ թեքում. այսինքն այդ դպրոցի աշակերտները՝ ուսման վերջին տարիների ընթացքում հատուկ ծրագրով ձեռք են բերում կոոպերատիվ աշխատանքի համար որոշ տեսական ու գործնական գիտելիքներ։

Անկախ դրանից, նույն դպրոցական ցանցում գոյություն ունեն հատուկ կոոպերատիվ տեխնիկումներ, որտեղ կոոպերացիայի համար պատրաստվում են միջին ու բարձր որակի մասնագետներ։

Մենք ավելի մանրամասն կանգ չենք առնում կոոպերատիվ լուսավորության վերջին յերկու ձևերի բովանդակության վրա։

Մեր նպատակը կոոպերատիվ լուսավորության մասսայական աշխատանքներն են, որոնց և մենք նվիրելու յենք ներկա գրքույկի հետևյալ գլուխները։

---

## II. ԿՈՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանվորների և գյուղացիների լայն մասսաներին կոոպերատիվ շինարարության հետ գործնականորեն կապելու համար անհրաժեշտ է այդ մասսաների քաղաքական ու հասարակական զիտելիքները բարձրացնել, իսկ այս նշանակում է՝ կոոպերատիվ լուսավորության աշխատանքներն այնպես տանել, որ մի կողմից վերացվի մասսաների կոոպերատիվ անդրադիտությունը և մյուս կողմից—մասսայական աշխատանքի համար գործնական սովորություններ մշակվեն։

Կոոպերացիան, որի շարքերում տասնյակ միլիոններ գյուղացիական տնտեսություններ և միլիոնավոր բանվորներ են կազմակերպված, չի կարող միանգամից այդ բոլոր մասսաների մեջ սկսել մի այդպիսի հսկայական աշխատանք։ Կոոպլուսաշխատանքի լավագույն ձևը—կոոպերատիվ ակտիվի կազմակերպումն է կոոպերատիվ խմբակի մեջ։

Ինչ ենք հասկանում կոոպերատիվ ակտիվ ասելով և ովքեր են կոոպերատիվ ակտիվի մեջ մտնում։

Կոոպերատիվ ակտիվը—դա կոոպերացիայի շինարարական աշխատանքին մոտիկից մասնակցող մասսան է։ Այդ ակտիվը դիտում է կոոպերատիվի



աշխատանքների ընթացքը, ոգնում է վարչությանը կոոպերատիվի գործերը կարգի դնելու և բացերը վերացնելու, խորհուրդներ և առաջարկություններ մուցնելով վարչությունը՝ նրա աշխատանքը թեթևացնում է կոոպերատիվ մասսայական կամպանիաներ է կազմակերպում, նոր անդամներ է հավաքագրում և փայավճարների գանձման գործին աջակցում։ Նա մասնակցում է կոոպերատիվի վարչության աշխատանքներին որպես լավ խորհրդատու և ոգնական. նա վարչության հետ միասին ու նրա ղեկավարությամբ ծրագրում և տանում է կոոպերատիվի տնտեսությունը մասսաների իրական կարիքները բավարարելու համար։

Կոոպերատիվ ակտիվի մեջ բոլորովին կամավոր հիմունքներով մտնելու յեն գյուղում և քաղաքում կոոպերացված մասսաների հետևյալ խմբերը։

ա. Կոոպերատիվի լիազորներն ու խանութային հանձնաժողովի անդամները.

բ. Կուսակցական, կոմյերիտական և արհմիութենական ստորին ակտիվը, այլև կանանց պատգամավորական ժողովների ակտիվը.

գ. Հիմնարկների և գործարանների կոոպհանձնաժողովների բյուրոները.

դ. Գյուղխորհրդի ու քաղխորհրդի կոոպերատիվ հանձնաժողովների անդամները.

յե. Գյուղական խորհրդային մտավորականությունը (ինտելլիգենցիան)—ուսուցչությունը, գյուղատնտեսը, բժիշկը և այլն։

զ. Բան., գյուղ. և զինթղթակիցները։

Ինքնըստինքյան հասկանալի յե, որ այս խմբերից բացի կոոպերատիվ ակտիվի մեջ կարող են մտնել կոոպերատիվի անդամների ավելի լայն շրջաններ, յեթե կոոպլուսաշխատանքները կարողացել են ավելի լայն մասսաներ համախմբել ակտիվի շուրջը։

Բացի այդ կոոպերատիվի վարչությունը և կոոպերատիվի աշխատող ապպարատը կոոպերատիվ ակտիվի անհրաժեշտ մասն են կազմելու և նրա ուղղությունը տվողն ու ղեկավարողը։

Ահա այդ ակտիվն է, որ կազմակերպվելով կոոպլուսխմբակներում, տանելու յե կոոպերացիայի գաղափարների մասսայականացման վերը ցույց տված աշխատանքները։

Այժմ մի քանի խոսք այն մասին, թե ինչ հիմունքներով պետք է կազմակերպել կոոպլուսխմբակները և ինչ պայմաններում դնել նրանց աշխատանքները՝ վերջիններս ավելի արդյունավետ դարձնելու համար։

---

## III. ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ամենից առաջ պետք է պարզել այն հարցը թե ով կարող է նախաձեռնել կոոպերատիվ խմբակի կազմակերպման գործին։

Ամեն մի կոոպերատիվ աշխատում է իր ինքնուրույն պայմաններում և նրա աշխատանքի միջավայրը տարբերվում է մի այլ կոոպերատիվի պայմաններից ու միջավայրից։ Մի տեղ կարող են կոոպերատիվ լուսավորության գործով հետաքրքրվել կուսակցական ու կոմյերիատական բջիջները, մի այլ տեղ՝ գյուղխորհուրդը, մի յերրորդ տեղ՝ կոոպերատիվի անդամների մի վորոշ խումբ և այլն, և այլն։ Այսպիսով կոոպերատիվ խմբակի կազմակերպման նախաձեռնությունը կարող է բղխել տարբեր կոոպերատիվներում տարբեր շրջաններից։ Այս դեպքում վարչության անելիքը պիտի լինի ընդառաջ գնալ այդ նախաձեռնությանը և նոր խմբակի կազմակերպման հենց առաջին որերից կազմակերպչական ու կոոպերատիվ ղեկավարությունը իր ձեռքն առնել։

Հետևյալ հիմնական խնդիրն այն է, թե խմբակը ինչպիսի կազմ է ունենալու, ուրիշ խոսքով՝ ասած, ովքեր են խմբակին անդամագրվելու, ինչ մտավոր պատրաստություն ունեն նրանք, խմբա-

կային ինչպիսի պարապմունքների և վորքան հաճախ նրանք կարող են մասնակցություն ունենալ և վերջապես խմբակային պարապմունքների ինչպիսի յեղանակ է ընդունելու խմբակը՝ ինքնակրթությամբ թե խմբակավարի ղեկավարությամբ։

Յերբ այս խնդիրները պարզված են խմբակի նախաձեռնողների ու կոոպերատիվի վարչության համար անհրաժեշտ է դառնում վորոշել թե կոոպերատիվ խմբակը վորտեղ է կենտրոնացնելու իր գործնական աշխատանքները, իր պարապմունքները։ Այս խնդիրը վորոշելիս պիտի ի նկատի առնել մի շարք գործնական մոմենտներ. ա) խմբակի պարապմունքների համար ավելի հարմար սարգ ու կարգը. բ) գրքերի, պլակատների ու դիագրամմաների ավելի հարուստ ժողովածուն. գ) կոոպերատիվ խմբակի ակտիվ անդամների մեծամասնության բնակատեղին և այլն։ Փննելով այս բոլոր մոմենտները բազմակողմանի կերպով խմբակի կազմակերպման նախաձեռնողները վերջնական վորոշում են հանում թե խմբակը ինչ հիմնարկի կից է կազմակերպվելու ու գործելու։ Այս մտքով կոոպերատիվ խմբակներ կարող են կազմակերպվել ա) գյուղերում՝ խրճիթ-ընթերցարաններին, դպրոցներին, գյուղխորհուրդներին կամ կոոպերատիվներին կից և բ) քաղաքներում—բանակումբներին, զինվորական մասերին, հիմնարկների ու գործարանային կոլեկտիվների կից, այլ և կոոպերատիվների խանութային ու լիազորական ակտիվի անդամներից։

Խմբակների կազմակերպման գործին պիտի տալ



խիստ կամավոր բնույթ։ Մինչև այժմ մի շարք կոոպերատիվներում ընդունված ներկայացուցչական ձևը (յերբ խմբակը ներկայացնում է իրենից մի ներկայացուցչական մարմին) պետք է կտրականապես անընդունելի համարել։ Կոոպերատիվ խմբակին ամենվոք մասնակցում է իր անհատական ցանկությամբ և վոչ թե այս կամ այն հիմնարկության կամ կազմակերպության ընտրությամբ։

Խմբակների կազմը հավաքագրելիս նախաձեռնողները պիտի ուշք դարձնեն վոչ թե խմբակի անդամների քանակին այլ նրանց վորակին։ Գործնական կյանքը միշտ ել ցույց է տվել, վոր աշխատունակ ու գործունյա յեն վոչ թե անպայման այն խմբակները, վորոնք բազմամարդ են, այլ այն խմբակները, վորոնց կազմի մեջ մտնում են առաջին հերթին ակտիվ անդամներ, կոոպերատիվի գործունեությամբ հետաքրքրվող անհատներ թեև թվով վոչ բազմամարդ։

Շատ կարևոր է հենց սկզբից վորոշել խմբակային պարապմունքների յեղանակը, ծրագիրը և հաջորդականությունը կամ ժամկետները։

Ինչ վերաբերվում է պարապմունքների յեղանակին (մեթոդ) մեր կարծիքով գործնական հետևանքներ մեր պայմաններում կարող է տալ առայժմ խմբակային պարապմունքները խմբակավարի ղեկավարությամբ։ Ինքնակրթության խմբակների կազմակերպումը (այսինքն այնպիսի խմբակների, վորոնց մեջ աշխատանքը տարվում է

կոլլեկտիվորեն և առանց խմբակավարի) մենք մեր կոոպերատիվների ակտիվի համար առայժմս վաղաժամ ենք համարում։

Պարապմունքների ծրագիրը պիտի կազմել հարմարեցնելով այն տվյալ կոոպերատիվի գործնական խնդիրներին ու խմբակի անդամների գիտելիքների մակարդակին։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ ծրագրային խնդիրները միաժամանակ պետք է բխի նաև թե խմբակավարի վորակից և թե խմբակավարին տրամադրված գրականության ու այլ ձեռնարկների ժողովածուից։ Ներկա ձեռնարկի մեջ մենք բերել ենք խմբակների պարապմունքների որինակելի ծրագիր, այլ և խմբակավարի ու խմբակների անդամների համար անհրաժեշտ կոոպերատիվ հայերեն գրականության ցուցակը։ Կարծում ենք թե այդ ծրագիրը և թե նրան կցած գրականության ցուցակները մոտակա մի յերկու տարիներում զգալի չափով կհեշտացնեն կոոպերատիվ խմբակների և խմբակավարի աշխատանքները։ Մնացած գործնական խնդիրներին մենք կդառնանք հետևյալ գլուխներում։

Անկախ վերը բերած ընդհանուր հիմունքներից կոոպերատիվ խմբակները և նրանց ղեկավարները պետք է մշտական կապ պահեն կոոպերատիվ կենտրոնների ու շրջանային կոոպերատիվ հրահանգիչների հետ՝ վերջիններից ստանալով թե գործնական ցուցմունքներ և թե ծրագրային ղեկավարություն։

Վոչ պակաս կարևոր է կոոպերատիվ խմբակի աշխատանքների կանոնավոր հաշվառումն ու կենտրոնին համապատասխան ինֆորմացիա ներկայացնելը։

Տեղերում աշխատանքները հեշտացնելու համար



ստորև բերում ենք կոոպերատիվ խմբակի կանոնադրությունը և մի շարք որինակելի ձևեր՝ խմբակի աշխատանքների ընթացքը հաշվառելու և կանոնավոր ձևակերպելու համար։

---

Հավելված III գլխին

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____ին կից (ցույց տալ, թե ինչ հիմնարկին կից կամ վորտեղ և կազմակերպվում) կոոպերատիվ խմբակի։

### I. Խմբակի նպատակը

1. _____ին կից կոոպերատիվ խմբակի նպատակն է կոոպերացիայի միջոցով սոցիալիստական շինարարության մասնակից դարձնել _____ (այսինչ) սպառողական ընկերության շրջանում ապրող գյուղացիության (կամ արհմիության անդամների) լայն մասսաներին. վերջիններիս մեջ զարգացնելով կոոպերատիվ ինքնագործունեությունն և ակտիվությունն, բարձրացնելով նրանց մտավոր ու կուլտուրական մակարդակը և դաստիարակելով նրանց մեջ կոոպերատիվ գիտելիքներն ու սովորությունները։

### II. Աշխատանքի բնույթն ու մեթոդները

2. _____ին կից կոոպերատիվ խմբակը կոոպերատիվ ագիտացիայի ու պրոպագան-

գայի հենակետն է ..... սպառողական ընկերության գործունեության շրջանում (կամ ավելի վորոշ—այսինչ գյուղում՝ յեթե խմբակը գործում է մի գյուղի սահմանում)։

3. .....ին կից կոոպերատիվ խմբակը նպատակ դնելով իր անդամներին տալ կոոպերատիվ շինարարության համար անհրաժեշտ սովորություններ ու գիտելիքներ, անդադար աշխատանք է տանում զարկ տալու կոոպերացված մասսաների կոոպերատիվ ակտիվությանն ու ինքնագործունեությանը և միաժամանակ կոոպերացիայի շարքերը ներգրավելու դեռևս չկոոպերացված մասսաներին։

4. Անկախ այդ աշխատանքներից ..... .....ին կից կոոպերատիվ խմբակն ակտիվ մասնակցություն է ցույց տալիս կոոպերացիայի (և մասնավորապես ..... սպառողական ընկերության տնտեսական կյանքի) հետ կապ ունեցող բոլոր տեսակի կամպանիաներին։

5. .....ին կից կոոպերատիվ խմբակը տանում է ներխմբակային պարապմունքներ, վորոնց նպատակն է տալ խմբակի անդամներին կոոպերատիվ շինարարության համար անհրաժեշտ սովորություններ ու գիտելիքներ (տես 3-րդ կետ)։ Այդ պարապմունքները տարվում են խմբակի անդամների ընդհանուր ժողովների մեջ։

Ծանոթություն.—Յեթե խմբակը բազմամարդ է, պարապմունքները կարող են տարվել խմբակի առանձին-առանձին սեկցիաներում (կամ մասերում)։

6. .....ին կից կոոպերատիվ խմբակն իր ներխմբակային պարապմունքներում՝ ա)



ծանոթանում է կոոպերացիայի գործնական ու կազմակերպչական խնդիրների հետ, բ) վերջիններիս կապում է իր սեփական կոոպերատիվի կյանքի հետ, գ) տանում է մասսայական քաղաքական աշխատանքի բոլոր ձևերը (զրույց, զեկուցում, դասախոսություն, ներկայացումներ, յերեկույթներ, կինո-սեանսներ և այլն), դ) ուսումնասիրում է սպառողական կոոպերացիայի պատմությունն ու նվաճումները և յե) կազմակերպված մասնակցություն է ցույց տալիս ..... սպառողական ընկերության կյանքի հետ կապ ունեցող բոլոր կամպանիաներին՝ լայն մասսաներին առնելով իր զեկավարության տակ։

## III. Կոոպերատիվ խմբակի տեղը ..... .....աշխատանքների մեջ

7. .....

.....

.....

Ծանոթություն 1.—Այս հոդվածում պետք է վորոշել կոոպերատիվ խմբակի տեղը. որինակ..... .....գյուղի խրճիթ-ընթերցարանի կամ ..... .....բանակումբի աշխատանքների մեջ.

Ծանոթություն 2.—Հոդվածը պետք է խմբագրել այսպես.«.....ին կից կոոպերատիվ խմբակի գործունեության ծրագիրը մտնում է ..... .....ի աշխատանքների ընդհանուր ծրագրի մեջ և հաստատվում է.....(ում) կողմից»։

## IV. Կոոպերատիվ խմբակի կազմը

8. .....ին կից կոոպերատիվ

խմբակի մեջ կարող են մտնել.....
սպառողական ընկերության անդամները, այլև չքավոր ու միջակ այն գյուղացիները, որոնք դեռևս չեն անդամագրվել .....սպառողական ընկերությանը, նույնպես և շրջանի խորհրդային մտավորականության ներկայացուցիչները (ուսուցիչները, բժիշկը, գյուղատնտեսը և այլն)։

Ծանոթություն 1.—Խմբակի բաղմամարդ լինելու դեպքում թույլատրվում է խմբակն առանձին (15—25 հոգուց բաղկացած) մասերի բաժանել, մտավոր զարգացման աստիճանի համաձայն, կամ այլ նշաններ հիմք ընդունելով։

Ծանոթություն 2.—Խմբակի գործունեության լրջությունը պահանջում է, որ նրա մեջ ղեկավար դեր ունենան կուս. և կոմերիտ. բջիջները, գյուղխորհուրդը, ՓՍԿ-ը, այլև գյուղի մտավորականությունը։

Ծանոթություն 3.—Խմբակը հատուկ ուշադրություն է դարձնում կանանց, յերիտասարդության ու չքավորների կոոպերացման գործնական խնդիրներին։

## V. Խմբակի ներքին կառուցվածքը

9. Խմբակը ձևակերպվում է նախաձեռնողների կողմից հրավիրված առաջին կազմակերպչական ժողովում։ Այս ժողովում ա) հիմնադրվում է խմբակը, բ) ընտրվում է խմբակի բյուրոն (3 հոգուց բաղկացած), գ) հաստատվում է խմբակի կանոնադրությունը, նախահաշիվն ու գործունեության ծրագիրը։

10. Խմբակի ընդհանուր ժողովները հետագայում ա) հաստատում են խմբակի նոր անդամների ընդունելությունը բ) խմբակային կարգապահությունը խախտողների դեմ ձեռք են առնում համապատասխան միջոցներ (նկատողություն, զգուշացում, և հեռացում),



և գ) լսում են խմբակի բյուրոյի զեկուցումներն խմբակի գործունեության մասին ու տալիս են իրենց դնահատականը այդ զեկուցումների մասին։

11. Խմբակի բյուրոն ա) կապ է պահում.....
.....հետ. (ծանոթություն. ցույց տալ ում հետ. սպառկոոպի վարչության, բանակումբի վարչության, խրճիթվարի). բ) մշակում է խմբակի գործունեության ծրագիր, նախահաշիվ՝ համաձայնեցնելով այն.....հետ. (ցույց տալ ում հետ). գ) հաշվառում է խմբակի աշխատանքները և կանոնավոր ինֆորմացիա յե տալիս.....(ցույց տալ ումը). և դ) ղեկավարում է խմբակի բոլոր աշխատանքները և յելույթները։

12. Խմբակի առանձին անդամները ա) հաճախում են խմբակի պարապմունքները. բ) մասնակցում են խմբակի բոլոր հասարակական բնույթ ունեցող կոոպերատիվ յելույթներին. գ) կատարում են խմբակի կոնկրետ հանձնարարությունները և դ) լայն ագիտացիա յեն տանում կոոպերատիվ գաղափարների ոգին և հատկապես կոոպերացիայի շարքերը չկոոպերացված մասսաններին ներգրավելու գործում։

## VI. Խմբակի միջոցները

13.....

---

Ծանոթություն.—Այս հոդվածում պետք է ցույց տալ թե ինչ միջոցներով է խմբակը իր ծախքերը ծածկելու. ում է նրա նախահաշիվը հաստատում և այլն, հատկապես սպառողական ընկերությունների կից խմբակների համար մենք խորհուրդ ենք տալիս այս հոդվածը

խմբագրել հետևյալ ձևով։ «.....ին կից կոոպերատիվ խմբակի ծախքերը ծածկվում են..... .....սպառողական ընկերության կուլտ ֆոնդի միջոցներից, բոլոր վորում խմբակի նախահաշիվը կազմվում է խմբակի բյուրոյի կողմից ու վերջնականապես հաստատվում է.....սպառողական ընկերության վարչության կողմից»։

13. Խմբակի միջոցների ծախսելու կարգը, այլ և հաշվապահության պարտադիր հիմունքները խմբակի բյուրոն համաձայնեցնում է.....հետ, (ում հետ)։

---

Հավելված III գլխին

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԿՈՈՊԽՄԲԱԿԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն կոոպխմբակի կանոնադրության նախաձեռնող խումբը (կամ կոոպերատիվ խմբակի բյուրոն) կազմակերպչական ժողովին և ներկայացնում իր գործունեության նախահաշիվն ու ծրագիրը, այլ և իր հաշվետվությունը։

Անհրաժեշտ է վոր նախահաշիվ կազմելիս ի նկատի առնվեն հետևյալ հիմնական խնդիրները։ 1) Ի՞նչպիսի դրամական միջոցներ են տրամադրվում կոոպերատիվ խմբակին կոոպերատիվի վարչության կողմից։ 2) Ինչ դրամական միջոցներ կարող է ձեռք բերել ինքը՝ կոոպերատիվ խմբակը (յերեկույթներից, կամավոր մուծումներից, դասախոսություններից և այլն) և 3) ինչ հատուկ նպաստ կամ այլ պատահական յեկամուտներ կարող են ստացվել այլ հասարակական ու կոոպերատիվ կազմակերպություններից։ (Կոմբինատից, կոոպերատիվ ակտիվից, ՓՈԿ-ից, գյուղխորհրդից, արհմիութենական կազմակերպություններից և այլն)։ Յերբ այս խնդիրները պարզված են մենք կարող ենք կազմել խմբակի դրամական մուտքերի նախահաշիվը։



Հետագա աշխատանքը՝ ծախսերի նախահաշիվ կազմելը—ավելի հեշտ գործ է. ծախսերի հախահաշիվը ամբողջովին բղխում է կոոպխմբակի աշխատանքային ծրագրից, իսկ վերջինս պետք է համապատասխանի տվյալ խմբակի դրամական ու կազմակերպչական հնարավորություններին և անդամների մտավոր մակարդակին։

Կոոպխմբակը տանում է իր աշխատանքների տեղեկատու քարտը և պահում է արձանագրությունների գիրք։ Տեղեկատու քարտը պարբերաբար (յերեք ամիսը մի անգամ) ուղարկվում է Հայկոոպի կազմ բաժնին, իսկ արձանագրությունների գիրքը պահվում է կոոպերատիվ խմբակի բյուրոյի մոտ և նրա մեջ ժամանակագրական կարգով արձանագրվում են թե բյուրոյի, թե խմբակի անդամների ընդհանուր ժողովների վորոշումներն ու ընթացիկ աշխատանքների համառոտ նկարագիրը։

Ստորև մենք բերում ենք ա) նախահաշվի, բ) տեղեկատու քարտի և գ) արձանագրության գրքի որինակելի ձևերը. տեղերի աշխատողները այդ ձևերը կարող են հիմք ընդունել իրենց աշխատանքների ձևակերպման ընթացքում մտցնելով համապատասխան թերվեր և փոփոխություններ։

# ՀԱԽԱՍԱՀԱՇԻՎ

## ՄԱՐՏ

1927/28 տնտեսական տարվան համար դեպի Կոմսոմոլի Կենտրոնական Կոմիտեն ուղարկվող տարեկան հաշիվ

| Ծառայ. հայտ. | Ցեղերի (Վարչության կամ Գրասենյակի) անունը | Մուտք. գումար. | | Ծառայ. հայտ. | Ցեղերի (Վարչության կամ Գրասենյակի) անունը | Մուտք. գումար. | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ռուբ. | Կ. | | | Ռուբ. | Կ. |
| 1. | Կոմսոմոլական-կոմունիստական . . . | 72 | 15 | 1. | Ընդամենը ցեղերի մասին . . . | 392 | 17 |
| 2. | Մեր դասակարգային թշնամիներին 1926/27 թվականին ուղարկված գրավոր տեղեկագրեր . . . | 2675 | 20 | | | | |
| 3. | Ցեղերը հրատարակած գրքերի, գրքույկների և գրքախաղ . . . | 267 | 52 | | | | |
| 4. | Գաղտնի միավորումներ . . . | 40 | 12 | | | | |
| | Ընդամենը . . . | 392 | 17 | | | | |

| Ծառայ. հայտ. | Ցեղերի (Վարչության կամ Գրասենյակի) անունը | Մուտք. գումար. | |
|---|---|---|---|
| | | Ռուբ. | Կ. |
| 1. | Ինքնաբերաբար հեղինակված գրքերի . . . | 40 | — |
| 2. | Ինքնաբերաբար հեղինակված գրքերի . . . | 36 | — |
| 3. | Ինքնաբերաբար հեղինակված գրքերի . . . | 48 | — |
| 4. | Ինքնաբերաբար հեղինակված գրքերի . . . | 60 | — |
| 5. | Վերադարձրեցինք 30 տոն տպագրված գրքեր . . . | 75 | — |
| 6. | Ծախս (25 հոգու 3-ական ռ.) . . . | 93 | — |
| | Ընդամենը . . . | 357 | — |
| | Ընդամենը ցեղերի մասին . . . | 35 | 17 |



## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ...

1. Այս նախահաշիվը կազմվում է ու հաստատվում կոմսոմբակի ընդհանուր ժողովի կողմից, սակայն վերջնականապես նա ուժի մեջ է մտնում վարչության կողմից հաստատվելուց հետո։

2. Ցեղերի յուրաքանչյուր հոդվածը պետք է կոնկրետացնել (օրինակ. պիտի ցույց տալ, թե ինչ կահավորում և ինչ արժեքի յի յենթադրվում գնել. ինչ թերթեր և գրքեր են դուրս գրվելու և այլն)։

3. Նախահաշիվը պիտի ստորագրված լինի կոմսոմբակի բյուրոյի կողմից. պատճենը պիտի ուղարկել Հայկոմսոմի կազմ-բաժնին վարչության հաստատումից հետո։

# ՏԵՂԵԿԱՏՈՒ ՔԱՐՏ

_____ին կից կոոպխմբակի

## I. Ընդհանուր տեղեկություններ խմբակի մասին

1. Քանի՞ հոգի յին կազմակերպված խմբակում.
   Այդ թվում քանի՞ հոգի
   ա) կուսակցական
   բ) կոմյերիտական
   գ) կին
   դ) չքավոր
   յե) արհմիության անդամ.
2. Բյուրոյի կազմը (քանի՞ հոգի և ովքեր են).
3. Վորքան հաճախ է խմբակը հավաքվում խմբակային պարապմունքների.
4. Ի՞նչպիսի աշխատանքներ է տանում խմբակը.
5. Ո՞ւնի խմբակավար.

## II. Խմբակի դրամական յելք ու մուտքը

Այս տախտակում պիտի ցույց տալ՝

ա) ի՞նչ գումարներ են յեռամսյակի ընթացքում տրամադրվել կոոպխմբակին.

բ) ի՞նչ մնացորդ է մնում հետևյալ յեռամսյակի սկզբին.

Ծանոթություն.—Տեղեկատու քարտը ստորագրվում է կոոպխմբակի բյուրոյի կողմից և հաստատվում է կոոպերատիվ վարչության կողմից։ Վերջինս տեղեկատու քարտի մի պատճենը ուղարկում է Հայկոոպի կադր-բաժնին։



_____ յեռամսյա գործունեության մասին

3 ամիսը մի անգամ ուղարկվում է Հայկոոպի կադրբաժնին

## III. Խմբակի աշխատանքները արդյունքները

| Հարցեր | Յեռամսյակի ամիսները | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1. Քանի՞ նիստ է ունեցել բյուրոն | | | | |
| 2. Քանի՞ ընդհան. ժողով է ունեցել կոոպխմբակը | | | | |
| 3. Քանի՞ հոգի յին մասնակցել ընդ. ժողովներին | | | | |
| 4. Քանի՞ ժամ են տևել ընդհանուր ժողովները | | | | |
| 5. Ի՞նչ մասսայակ. յելույթներ են կազմակերպվել խմբակի կողմից՝ | | | | |
| ա) հաս. ժողովներ | | | | |
| բ) Ներկայացում | | | | |
| գ) կինո | | | | |
| դ) Մոգակ. լապտ. | | | | |
| յե) Եքսկուրսիա | | | | |
| զ) Այլևայլ | | | | |
| 6. Քանի՞ հոգի յին մասնակցել 5-րդ կետի մեջ հիշված աշխատանքների | | | | |
| 7. ..... | | | | |

## IV. Այլ տեղեկաններ

Այս տախտակում համառոտակի պիտի հիշատակել խմբակի կատարած այլ աշխատանքները, այլև խմբակի բյուրոյի ընթացիկ աշխատանքները, խմբակի աշխատանքների ընդհանուր բնութագիրը։

| | | | |
|---|---|---|---|
| | | | կամավորական կերպով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ընդունելու մասին: |
| | | | Ելույթներ՝ (ա) Ն. Ադամյան, (բ) Ս. Գրիգորյան, (գ) Ս. Ասլանյան, (դ) Ս. Ասլանյան, (ե) Ս. Ասլանյան, (զ) Ս. Ասլանյան, (է) Ս. Ասլանյան, (ը) Ս. Ասլանյան, (թ) Ս. Ասլանյան, (ժ) Ս. Ասլանյան, (ի) Ս. Ասլանյան, (լ) Ս. Ասլանյան, (խ) Ս. Ասլանյան, (ծ) Ս. Ասլանյան, (կ) Ս. Ասլանյան, (հ) Ս. Ասլանյան, (ձ) Ս. Ասլանյան, (ղ) Ս. Ասլանյան, (ճ) Ս. Ասլանյան, (մ) Ս. Ասլանյան, (յ) Ս. Ասլանյան, (ն) Ս. Ասլանյան, (շ) Ս. Ասլանյան, (ո) Ս. Ասլանյան, (չ) Ս. Ասլանյան, (պ) Ս. Ասլանյան, (ջ) Ս. Ասլանյան, (ռ) Ս. Ասլանյան, (ս) Ս. Ասլանյան, (վ) Ս. Ասլանյան, (տ) Ս. Ասլանյան, (ր) Ս. Ասլանյան, (ց) Ս. Ասլանյան, (ւ) Ս. Ասլանյան, (փ) Ս. Ասլանյան, (ք) Ս. Ասլանյան, (օ) Ս. Ասլանյան, (ֆ) Ս. Ասլանյան: |
| 3. | Հանձնարարվեց Ս. Ասլանյանին | 3. | Ս. Ասլանյանը հանձնարարվեց Ս. Ասլանյանին: |

(Հարգել. տես. 118)

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ելույթներ՝ (ա) Ն. Ադամյան, (բ) Ս. Գրիգորյան, (գ) Ս. Ասլանյան, (դ) Ս. Ասլանյան, (ե) Ս. Ասլանյան, (զ) Ս. Ասլանյան, (է) Ս. Ասլանյան, (ը) Ս. Ասլանյան, (թ) Ս. Ասլանյան, (ժ) Ս. Ասլանյան, (ի) Ս. Ասլանյան, (լ) Ս. Ասլանյան, (խ) Ս. Ասլանյան, (ծ) Ս. Ասլանյան, (կ) Ս. Ասլանյան, (հ) Ս. Ասլանյան, (ձ) Ս. Ասլանյան, (ղ) Ս. Ասլանյան, (ճ) Ս. Ասլանյան, (մ) Ս. Ասլանյան, (յ) Ս. Ասլանյան, (ն) Ս. Ասլանյան, (շ) Ս. Ասլանյան, (ո) Ս. Ասլանյան, (չ) Ս. Ասլանյան, (պ) Ս. Ասլանյան, (ջ) Ս. Ասլանյան, (ռ) Ս. Ասլանյան, (ս) Ս. Ասլանյան, (վ) Ս. Ասլանյան, (տ) Ս. Ասլանյան, (ր) Ս. Ասլանյան, (ց) Ս. Ասլանյան, (ւ) Ս. Ասլանյան, (փ) Ս. Ասլանյան, (ք) Ս. Ասլանյան, (օ) Ս. Ասլանյան, (ֆ) Ս. Ասլանյան: |
| 2. | Ս. Ասլանյանի դիմումը | 2. | Ս. Ասլանյանի դիմումը: |
| 1. | Ս. Ասլանյանի դիմումը | 1. | Ս. Ասլանյանի դիմումը: |

(Հարգել. տես. 118)



| | | | |
|---|---|---|---|
| | | | Ելույթներ՝ (ա) Ն. Ադամյան, (բ) Ս. Գրիգորյան, (գ) Ս. Ասլանյան, (դ) Ս. Ասլանյան, (ե) Ս. Ասլանյան, (զ) Ս. Ասլանյան, (է) Ս. Ասլանյան, (ը) Ս. Ասլանյան, (թ) Ս. Ասլանյան, (ժ) Ս. Ասլանյան, (ի) Ս. Ասլանյան, (լ) Ս. Ասլանյան, (խ) Ս. Ասլանյան, (ծ) Ս. Ասլանյան, (կ) Ս. Ասլանյան, (հ) Ս. Ասլանյան, (ձ) Ս. Ասլանյան, (ղ) Ս. Ասլանյան, (ճ) Ս. Ասլանյան, (մ) Ս. Ասլանյան, (յ) Ս. Ասլանյան, (ն) Ս. Ասլանյան, (շ) Ս. Ասլանյան, (ո) Ս. Ասլանյան, (չ) Ս. Ասլանյան, (պ) Ս. Ասլանյան, (ջ) Ս. Ասլանյան, (ռ) Ս. Ասլանյան, (ս) Ս. Ասլանյան, (վ) Ս. Ասլանյան, (տ) Ս. Ասլանյան, (ր) Ս. Ասլանյան, (ց) Ս. Ասլանյան, (ւ) Ս. Ասլանյան, (փ) Ս. Ասլանյան, (ք) Ս. Ասլանյան, (օ) Ս. Ասլանյան, (ֆ) Ս. Ասլանյան: |
| 3. | Հանձնարարվեց Ս. Ասլանյանին | 3. | Ս. Ասլանյանը հանձնարարվեց Ս. Ասլանյանին

# IV. ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԱԿԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Հրահանգչական ընդհանուր ցուցումներ)

Կոոպերատիվ խմբակի պարապմունքները պիտի անպայման ընդգրկեն հետևյալ խնդիրները՝ ա) Տարրական գիտելիքներ կոոպերացիայի կազմակերպչական կառուցվածքի, կանոնադրության հիմնական կետերի ու կոոպերատիվ հասարակայնության աշխատանքի ձևերի մասին, բ) գիտելիքներ թե ինչպես է կառուցված և ինչպես է տարվում տեղական կոոպերատիվի ընտեսությունը և գ) պարզ ըմբռնողություն այն մասին թե պրոլետարական պետության պայմաններում և սոցիալիստական շինարարության գործում վորն է կոոպերացիայի դերը։

Այս խնդիրների ուսումնասիրությունը հենց սկզբից առաջ է բերում մի շարք կազմակերպչական հարցեր, վորոնց լուծումը կոոպերատիվ խմբակի աշխատանքային ծրագիրը պիտի անպայման նախատեսի և հենց դրանով ապահովել կարողանա խմբակի պարապմունքների հաջողությունը։

Վորո՞նք են այդ հարցերը։ Մենք կթվենք նրանցից գլխավորները։

1. Քանի՞ աշխատանքային ժամ (կամ քանի՞ պարապմունք) պիտի նախատեսել խմբակին վերը հիշած տարրական գիտելիքները տալու համար։

2. Տարվա վո՞ր յեղանակներին ավելի նպատակա-

| № № | Ամսաթիվ | Դասի անվանումը | Դասի բովանդակությունը | Ինչպես պիտի անցնել դասը |
|---|---|---|---|---|
| | | (Հարմարագույնը) | | |
| | | | ԱՌԱՋՈՒՆ ԱՄԻՍ | |
| | | Կոոպերատիվ խմբակի պարապմունքների կազմակերպչական խնդիրներ։ | 1. Մեր արհիկի խմբակի նպատակը և ձևերը։ Խմբակի կազմակերպումը։ Դասերի ամսական ցուցակ։ | Խմբակի հանդիպումներ։ Ամսական ցուցակի մասին զեկուցում։ Ցուցակի քննարկում։ Ցուցակի հաստատում։ |
| | | | 2. Արհմիությունների վերաբերությունը կոոպերատիվի նկատմամբ։ | Զեկուցում։ Հարցերի քննարկում։ |
| | | | 3. Արհմիությունների դերը կոոպերատիվի կազմակերպման գործում։ | Զեկուցում։ Հարցերի քննարկում։ |

հարմար և խմբակային պարապմունքների կազմակերպումը.

3. Ի՞նչ կոնկրետ ծրագիր պիտի կազմել այդ պարապմունքների համար, ի՞նչ աղբյուրներ են հարկավոր թե խմբակավարի և թե խմբակի անդամների համար և վերջապես.

4. Ի՞նչպես վարվել այն դեպքերում յերբ խմբակի անդամների թիվը շատ մեծ է և անդամների մասավոր մակարդակը տարբեր է (այսինքն կան շատ պատրաստված անդամներ, և անդամներ, վորոնք պակաս պատրաստություն ունեն)։

Այստեղ մենք կփորձենք ընդհանուր ցուցումներ տալ կոոպերատիվ խմբակների աշխատանքների դեկավարության՝ մասնավորապես խմբակների ղյուրների ու խմբակավարների համար։

## ա. Ինչքան հաճախակի յեվ յերբ պարապմունքներ ունենալ

1. Գյուղական սպառողներին—(խրճիթ-ընթերցարաններին) կից կոոպխմբակները վորպես որենք պիտի կանոնավոր պարապմունքներ ունենան հոկտեմբերից մինչև ապրիլ ամիսը առնվազն շաբաթական մի անգամ (25—30 պարապմունք).

2. Ցուրաքանչյուր պարապմունքի տևողությունը չպիտի $1^1/_2$—2 ժամից ավելի լինի։

3. Նման խմբակները ամառվա ամիսներին (ապրիլից—սեպտեմբեր) չքայքայվելու համար անպայ-



ման պիտի ունենան հերթական հավաքույթներ դոնե 15—20 որը մի անգամ, վորտեղ հաջորդական պարապմունքների փոխարեն դրվում են զեկուցումներ ու զրույցներ կոոպերացիայի և տեղական կոոպերատիվին վերաբերվող առանձին խնդիրների մասին, այլ և մասնակցում են հասարակական-կոոպերատիվ խնդիրներին նվիրված բոլոր համայնական ժողովներին ու տոներին, նույնպես կազմակերպվում են եքսկուրսիաներ։

4. Գյուղերում խմբակներ կազմակերպելու սկզբնական ժամանակաշրջանում չպիտի կին պատգամավորուհիների կազմից առանձին կոոպերատիվ սեկցիաներ ստեղծել։ Կոոպերացիայի խնդիրներով հետաքրքրվող կին պատգամավորուհիները պիտի մտնեն ընդհանուր խմբակի մեջ։

5. Քաղաքային կոոպերատիվ խմբակները (գործարաններում, ձեռնարկ-հիմարկներում, բան-ակումբներին կից)—կանոնավոր պարապմունքներ պիտի ունենան ամբողջ տարին շաբաթական մի անգամ։ Ընդհատումները թույլատրելի յեն միայն տարվա չորս ամիսներում. (մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը)։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այս ընդհատումները նույնպես չպիտի մեռցնեն խմբակի աշխատանքները, այլ պետք է խմբակի կազմակերպչական ամբողջությունը պահպանել վորոշ ձեռնարկումներով, (հատկապես Միջազգային կոոպերատիվ որին, զանազան կամպանիաներին մասնակցելով, այլ և եքսկուրսիաներ կազմակերպելով)։

6. Կարմիր-բանակային կոոպերատիվ խմբակնե-

ը պետք է կազմակերպել ծառայության ժամկետն ավարտելուց և զորացրումին նախորդող ամիսներում։ Այս խնդիրն ավելի հարմար է համաձայնեցնել Կարմիր Բանակի քաղ-բաժնի հետ։

Ծանոթություն.—Մշտապես գործող Կարմիր-բանակայինների անկյուններում և ակումբներում ընդհանուր հիմունքներով կարելի է կազմակերպել մշտական կոոպերատիվ խմբակներ, որոնց աշխատանքների ծրագիրն ու պարապմունքների կարգը յուրաքանչյուր դեպքում պետք է հարմարեցվի անկյան կամ ակումբի վարչության հետ։

## Բ. Ծրագիր կազմելու հետ կապված խնդիրները

1. Ցերբ վոր խմբակի կազմակերպչական ժողովը խմբակի բյուրո և խմբակավար է ընտրել, վերջիններս ձեռնարկում են կոոպերատիվ խմբակի պարապմունքների կոնկրետ ծրագիր կազմելուն։

2. Այդ ծրագիրը պիտի ընդգրկի գոնե յերեք ամսվա աշխատանք, թեև այն կոոպերատիվ խմբակները, վորոնք կազմակերպչորեն ամրացել են կարող են իրենց պարապմունքների ծրագիրը մշակել մի տարվա համար. (տես վերը 1-ին և 5-րդ կետը)։

4. Ծրագիրը պիտի իր մեջ ամփոփի հետևյալ հիմնական կետերը. ա) քանի պարապմունք է ունենալու խմբակը, բ) ինչ հաջորդականությամբ և ինչ նյութերի շուրջն են լինելու այդ պարապմունքները. գ) խմբակի անդամների ու խմբակավարի տրամադրության տակ ինչ անհրաժեշտ ձեռնարկներ ու աղբյուրներ պիտի լինեն յուրաքանչյուր պարապմունքի ժամանակ. դ) ինչ գործնական աշխատանքներով կոոպերատիվ խմբակը կապվելու է տեղական կոոպերատիվի ընթացիկ կյանքի հետ և յե) ինչ կարգով են տարվելու կոոպերատիվ խմբակի պարապմունքները։



4. Անհրաժեշտ է ծրագիր կազմելիս խմբակի պարապմունքների բովանդակությանը տալ գործնական թեքում։ Այս նշանակում է, վոր յեթե խմբակը իր մեծամասնությամբ գյուղացիներից է բաղկացած—պարապմունդները պիտի հետապնդեն գյուղացիական ակտիվ կազմակերպելու գործնական խնդիրները, յեթե խմբակի մեջ կանայք զգալի տոկոս են կազմում—պարապմունքները պիտի նախատեսեն հատուկ դասեր կամ զրույցներ նվիրված կանանց կոոպերացիայի մեջ տանելիք գործնական աշխատանքներին և այլն։

Ծանոթություն.—Ստորև իբրև հավելված մենք տալիս ենք ա) կոոպերատիվ խմբակներին անհրաժեշտ գրքերի ու այլ ձեռնարկների ցուցակը. (հայերեն և ռուսերեն լեզվով) և բ) կոոպերատիվ խմբակների պարապմունքների որոշակի ծրագիր.- (պարապմունքների սխեմա և աղբյուրներ)։

## գ) Կազմակերպչական այլ խնդիրներ

1. Կոոպերատիվ խմբակը չպիտի 20-25 հոգուց ավելի կազմ ունենա, քանի վոր ավելի մեծ խմբակներում պարապմունքների կազմակերպումն հանդիպում է մի շարք դժվարությունների։

2. Այն դեպքերում յերբ խմբակի անդամների թիվը 25 ից անցնում է, հարմար է պարապմունքների կանոնավոր կազմակերպման նպատակով խմբակը բաժանել յերկու մասի։

Ծանոթություն.—Ավելի բազմամարդ խմբակները կարող են բաժանվել յերկուսից ավելի մասերի։

6. ՏԻԽՈՄԻՐՈՎ.—Ինչպես անել վոր կոոպերատիվի գործերը լավանան.
7. ԱԿԿՈԴՈՒՍ. Ինչպես պետք է առևտուր անել.
8. Գործակատարի հաշվառումը
9. Վ. ԽԻԺՆՅԱԿՈՎ.—Սովորեցեք քննություն կատարել.
10. Ս. ԴԵՆԵՊՐՈՎՍԿԻ.—Սովորեցեք պլանով աշխատել.
11. Կոոպերատիվի առաջին քայլերը
12. ՊՈԺԻՏՆՈՎ.—Ինչպես պետք է հաշիվ տա սպառողական ընկերության վարչությունը
13. ՇՏԵՅՆ.—Մուրհակ.
14. ԴԵՆԻՍՈՎ.—Կազմակերպեցեք խանութային հանձնաժողովներ
15. ՆԵԿՐԱՍՈՎ.—Կոոպերատիվի ֆինանսները.
16. ՄԱՆՈՒԿ.—Կոոպերատիվ ուղիներով.
17. ՌԻԿՈՎ.—Գյուղը, նոր տնտեսական քաղաքականությունը և կոոպերացիան.
18. ԳՐԵԽՈՎ.—Ինչպես հավաքել փայավճարները
19. ՇԱԼՈՎ.—Մարկաների սիստեման.
20. ՑԻՆԳՈՎԱՏՈՎ.—Ինչ պետք է իմանալ ընկերության կանոնադրությունից.

## բ) ՀԽՍՀ Կոոպխորհրդի հրատարակությունները

1. Կոոպերացիայի միջազգային որը (ժողովածու).
2. Պ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ.—Սպառողական կոոպերացիան և նրա խնդիրները.
3. Գ. ՊԻՃԻԿՅԱՆ.—Հայաստանի սպառողական կոոպերացիայի պատմությունը.
4. Դեպի կոոպերացիա (մարտի 8-ի առթիվ).



## գ) ՀԽՍՀ Պետհրատարակչություն

1. ԼԵՆԻՆ.—Կոոպերացիայի մասին.
2. ՄԵՇՉԵՐՅԱԿՈՎ.—Ժամանակակից կոոպերացիան.
3. ԼԻՆՏՎԱՐՅՈՎ.—Կոոպերացիայի այբուբենը։

## դ) Զակկնիգայի հրատարակությունը

1. ՉԱՅԱՆՈՎ.—Կոոպերացիայի համառոտ դասընթացք։
2. ՇԱԼՈՎ.—Ի՞նչպես գնահատել ապրանքները.
3. ԱՆԻՆ.—Սպառողական կոոպերացիայի կազմակերպումն ու գործնականը. (լույս և տեսնելու մարտին)։
4. Հրահանգներ գործակատարին։

## յե) Տարբեր հրատարակություններ*

1. «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» (1920—1925) ժողովածու նվիրված Հայաստանի խորհրդայնացման հինգամյակին
2. Հ. ԱԶԱՏՅԱՆ.—ԽՍՀ Միության տնտեսական զարգացումն ու գյուղկոոպերացիան

---

* Այս և հետևյալ բաժնի գրքերը կոոպխմբակին ցանկալի լինք համարում ունենալ. «յե» բաժնում ցույց տրվածները վորպես աղբյուրներ ՍԽՀՄ և ՀՍԽՀ տնտեսության վերաբերվող խնդիրների համար, իսկ «զ» բաժնում գեղարվեստական ժողովրդական գրքեր լայն մասսաների ու թատերական-գեղարվեստական սեկցիաների համար։

3. ՆՈՒՅՆԻ.—Հայաստանի խորհրդայնացման 6-րդ տարեդարձը։
4. Մ. ՅՈԼՉՅԱՆ.—Հայաստանի գյուղկոոպերացիան և նրա խնդիրները։

## զ) Գեղարվեստական յեվ ժողովրդական գրքույկներ

1. Պ. ՅՈԼՉՅԱՆ.— Կորչեն չարչիները.
2. ՆՈՒՅՆԻ.—Գյուղացի ուժեղացրու կոոպերացիան
3. Մանուշի հարսանիքը. (կոոպերատիվ պյեսա).
4. Վոջիլների դեմ կռվելու միջոցը (նույնպես).
5. Խափանվեց (նույնպես).
6. Ա. Շահնազարյան. Ազատարարը
7. Զիլավյան. Փրկիչ կոոպերատիվ։

## Ե) Ռուսական հրատարակություններ*

1. *Кантор, М.*—Основы кооперативной политики партии.
2. *Бухарин, Н.*—Путь к социализму и рабоче-крестьянский союз.
3. *Микоян, А.*—О снижении цен.
4. *Макерова*—Прошлое и настояшее потреб. кооперации СССР.

* Այս ցանկը շատ թերի յե. կոոպխմբակը գրադարան կազմելիս պիտի անպայման նոր գրացուցակներ ունենա կամ գրքերը պատվիրել Հայկոոպի կազմ-բաժնի միջոցով. վերջինս միշտ տեղյակ կլինի նոր հրատարակությունների վերաբերմամբ և դուրս կգրի համապատասխան գրքեր։



5. *Махов*—Кооперация и крестянское хозяйство.
6. *Николаев*—Учительство и кооперация.
7. *Душкан М.*—Вклады, займы и авансы.
8. *Некрасов, Н. В.*—Кооперативная торговля. յերկու մաս.
9. *Черкашенинов И.*—Что такое лавочная комиссия и как в ней работать.
10. *Шехин, А. и Тянутова, Н.*—Что должна знать работница и крестьянка о кооперации.
11. *Шехов, А.*—О кооперировании бедноты.
12. *Тихомиров, В.*—Международный день кооперации.
13. Кооперация к 10-летию Октября.
14. *Тихомиров, В.*—10 лет советской кооперации.

---

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կոոպխմբակի գործնական աշխատանքների և կոոպերատիվի վարչության այդ աշխատանքների ղեկավարման դեպքում կոոպերատիվ խմբակին պիտի տրամադրվեն կոոպերատիվ կենտրոնից (Հայկոոպից) ստացվող բոլոր բանաձևները, կարևոր վորոշումները, շրջաբերականները։

2. Հատկապես կոոպերատիվ խմբակը պիտի ծանոթանա ա) չքավորների, կանանց և յերիտասարդության կոոպերացման վերաբերվող բոլոր նյութերի հետ. բ) Հայկոոպի Լիազորական Համագումարի ու

Խորհրդի տպագրված վորոշումների հետ, դ) Հայկոոպի կողմից կատարված քննական հետազոտությունների հետ և ե) Հայկոոպի հրահանգչի կողմից նախաձեռնվող բոլոր մասսայական բնույթ կրող կամպանիաների ու աշխատանքների հետ՝ մասնակցելով վերջիններին։

Անհրաժեշտ է կոոպխմբակի համար դուրս գրել հետևյալ որաթերթերն ու ամսաթերթերը (ռուսերեն և հայերեն)։

ա) «Խորհրդային Հայաստան»—որաթերթ.
բ) «Մաճկալ»—շաբաթական 2—3 անգամ.
գ) «Ավանգարդ»—նույնպես
դ) «Ցերիտասարդ բայշևիկ»—ամսաթերթ
յե) «Կոմունիստ» »
զ) «Կոոպերացիա»—ՀԽՍՀ Կոոպխորհրդի ամսաթերթը.
է) „Смычка“—Ցենտրոսոյուզի գյուղ. ամսաթերթ
ը) „Общество потребителей“—Ցենտրոսոյուզի թերթը շաբաթական 2—3 անգամ։

4. Այն խմբակները, վորոնց կազմի մեջ մտնում են ավելի բարձր պատրաստությամբ անդամներ—կարող են դուրս գրել լրացուցիչ ամսաթերթեր և որաթերթեր Հայկոոպի կազմ-բաժնի հատուկ ցուցումներով։

5. Կոոպխմբակների համար անհրաժեշտ գրքերի և այլ ձեռնարկների պատվիրներն պետք է ուղարկել Հայկոոպի կազմ-բաժնին վորը ժամանակին այդ պատվերների ընդունելու և կատարման կարգի մասին կոոպխմբակներին տեղյակ կդարձնի։

6. Բացի այս ցուցակում ցույց տրված կոոպերատիվ գրականությունից ու այլ աղբյուրներից—անհրաժեշտ է ունենալ պլակատներ—դիագրամմաներ և այլն։



Հավելված բ.

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԱԿԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

### Ա. ՌԱՋԻՆ ՁՐՈՒՅՑ

### Գյուղական կոոպերացիայի դերը խորհրդային շինարարության մեջ յեվ Լենինի ավանդները կոոպերացիայի մասին

Ի՞նչ է կոոպերացիան։ Կոոպերացիան մեզ մոտ և բուրժուական յերկրներում։ Կոոպերացիայի տարբեր տեսակները և նրանց դերը մեր յերկրի ժողովրդական տնտեսության մեջ, ինչումն է կայանում մեր յերկրի տնտեսական շինարարությունը.—Սոցիալիզմի կառուցումը վորպես հիմնական խնդիր և ընդհանուր խնդիր։ Ինչ ենք հասկանում սոցիալիզմի շինարարություն ասելով և կոոպերացիան ինչպես է այդ խնդրի լուծման մոտենում գյուղում և քաղաքում։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Լ ե ն ի ն.—Կոոպերացիայի մասին։
3. Ռ ի կ ո վ.—Գյուղը, նոր տնտեսական քաղաքականությունը և կոոպերացիան։
3. Զ ա յ ա ն ո վ. — Կոոպերացիայի համառոտ դասընթացնոր։
4. Մ ե շ չ ե ր յ ա կ ո վ.—Ժամանակակից կոոպերացիան։

## ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

### Քաղաքի յեվ գյուղի զոդումը (սմիչկաց) յեվ կոոպերացիայի դերը այդ զոդումի իրականացման մեջ

Ի՞նչ ասել է սմիչկա։ Գյուղի և քաղաքի տնտեսական շինարարության փոխադարձ կապը կամ համաձայնեցումը։ Գյուղը. վորպես արտադրող գյուղատնտեսական մթերքների ու արդյունաբերության համար արհրաժեշտ հում նյութերի։ Քաղաքը—պետական արդյունաբերության և գյուղացուն անհրաժեշտ ապրանքների մատակարարող։ Գյուղատնտեսական կոոպերացիան և նրա անելիքները։ Սպառողական կոոպերացիան և նրա անելիքները։ Սմիչկայի հիմնական լծակները—կոոպերատիվ այդ յերկու սիստեմներն են։ Տնայնագործությունը և բնակարանային շինարարությունը. կոոպերացիայի այդ յերկու սիստեմների նշանակությունը մեր յերկրի շինարարության մեջ։ Կոոպերացիան գյուղում խոշոր համայնական տնտեսության գործնական դպրոց է։ Սպառկոոպերացիան քաղաքում և գյուղում ապրանքատար գալխավոր ուղին է։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

Տես վերը, և բացի այդ

1. ՌԿԿ (բ) 14-րդ կոնֆերենցիայի բանաձևերը (22—56 յերես)։
2. ՀԱՄԿԿ (բ) 15-րդ համագումարի բանաձևերը և մի շարք այլ բրոշյուրներ, վոր մեր Պետ-



հրատը լույս է ընծայելու 15-րդ համագումարի արդյունքների մասին։
3. Լինտվարյով.—Կոոպերացիայի այբուբենը (յերես 438)։

---

## ՅԵՐԲՈՐԴ ԶՐՈՒՅՑ

(Յերկրորդի շարունակությունը)

### Գյուղացու կարիքները յեվ կոոպերացիայի խնդիրները

Ինչ է մեզ հարկավոր մինչև լիակատար սոցիալիզմի իրականացումը։ ա) Մեր յերկրի ինդուստրալացումը. բ) գյուղատնտեսական արտադրության կատարելագործում. (մեքենայացում կոլեկտիվացում և ելեքտրականացում). գ) մասնավոր առևտրի ու միջնորդության բոլոր ձևերի վերացում. (100%-ով կոոպերացման միջոցով), դ) մեր յերկրի պաշտպանության ուժեղացում խաղաղ քաղաքականության անշեղ կիրառման միջոցով և յե) կռիվ հանուն միջազգային հեղափոխության։ Խորհրդային կոոպերացիայի անելիքները այդ բնագավառներում։ Կոոպերացիայի մեջ կազմակերպված գյուղացիները վորպես «քաղաքակիրթ կոոպերատորների» հասարակական ույժ գյուղում իրականացնելու կուլտուրական ու տնտեսական հեղափոխությունը։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

Նույնը ինչ վոր առաջին և յերկրորդ զրույցները և բացի այդ մեր մամուլի հետզհետե

լույս ընծայելիք հոդվածները «կուլտուրական հեղափոխության» և «քաղաքակիրթ կոոպերատորների» մասին։ (Հատկապես պետք է հետևել «Կոոպերացիա» թերթին)։

---

## ՉՈՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

## Սպառողական կոոպերացիան յեվ նրա դերը գյուղում

Ինչո՞ւ համար մենք դեմ ենք մասնավոր առևտրին։ Մասնավոր առևտրականը գյուղում մինչև խորհրդայնացումը և խորհրդային կարգերում։ Աշխատավորը (բանվոր թե գյուղացի) ինքը պետք է սովորի «առևտուր անել»։ Կոոպերատիվ առևտուրը և նրա կազմակերպումը։ Ինչ ապրանքներ են հարկավոր գյուղացուն։ Վորտեղից, ինչ չափով գնել ապրանքները։ Պլանով (ծրագրով) աշխատելու անհրաժեշտությունը. պետական արդյունաբերության և կոոպերացիայի փոխհարաբերությունները։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Պ. Ս տ ա մ բ ո լ ց յ ա ն.—Հայաստանի սպառկոոպերացիան և նրա խնդիրները (յերես 5—14)։
2. Լ ի ն տ վ ա ր յ ո վ.—Կոոպերացիայի՝ այբ ու բենը (պարապմունքներ Ե. Ը. և Ի.)
3. Ժամանակակից կոոպերացիան (գլուխներ Դ. Ցե. Զ. Ե. Ը. Թ. Ժ. ԺԱ. ԺԲ. և ԺԳ.)։
4. Հ ա յ կ ո ո պ ի 3-ր դ հ ա մ ա գ ու մ ա ր ի



թ ե զ ի ս ն ե ր ը «առևտրական քաղաքականության մասին»։
5. Ա կ կ ո դ ու ս.—Ինչպես պետք է առևտուր անել։
6. Ս. Դ ն ե պ ր ո վ ս կ ի.— Սովորեցեք պլանով աշխատել։

---

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

## Առևտրի կազմակերպումը գյուղական սպառողական ընկերության մեջ

Ինչպես գնահատել ապրանքները։ Տարբական գիտելիքներ ապրանքի առքի գնի, ինքնարժեքի, հավելումների մասին։ Վաճառքի գինը ինչպես է կազմվում։ Նորմալ ոգուտի (կուտակումի) անհրաժեշտությունը։ Կառավարության կարգադրությունները գների քաղաքականության մասին.—վերադիրների ու ծախքերի պարտադիր նորմաները։ Գների իջեցման նշանակությունը գյուղացու և բանվորի համար։ Ապրանքի վաճառքի հարգը սպառկոոպում։ Արտոնություններ անդամների ու չքավորների համար։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

Տես վերը, այլ և
1. Ծանոթանալ Հայկոոպի մի շարք շրջաբերականների հետ։
2. Ինչպես գնահատել ապրանքները. (հրատարակություն Զակկնիգայի 1928 թ. Թիֆլիս(։

---

## ՎԵՑԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

### Ինչ միջոցներով են աշխատում սպառողական ընկերությունները

Սպառողական ընկերության միջոցները։ Հիմնական դրամագլուխ (ինչպես և նա կազմվում), փայադրամագլուխ (գանձումը լրիվ և մաս-մաս)։ Արտոնություններ չքավորների համար։ Կամավոր լրացուցիչ փայեր։ Ընտանիքի յերկրորդ, յերրորդ և այլն անդամների փայավճար գանձելու կարգը և արտոնությունները։ Արտոնություններ կանանց կոոպերացման համար։ Ոգուտ. ինչպես բաշխել ընկերության ոգուտները։ Փոխառու միջոցներ. ապրանքային ու դրամական վարկեր։ Ցերկարատև և կարճատև վարկեր։ Ավանդներ և ավանսներ ընկերության անդամներից։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Ս. Դնեպրովսկի.—Սովորեցեք պլանով աշխատել։
2. Նեկրասով.—Կոոպերատիվի ֆինանսները։
3. Գրեխով.—Ինչպես հավաքել փայավճարները։
4. Միախանութ և բազմախանութ սպառողական ընկերությունների կանոնադրության համապատասխան հոդվածները։
5. Հայկոոպի հրահանգները։

---



## ՅՈԹԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

### Ինչպես է կառավարվում սպառողական ընկերությունը

Փայատերը պիտի սովորի կառավարել իր տնտեսությունը (հասարակական առևտուրը)։ Փայատերերի ընդհանուր ժողովը—վերջին սպառողական ընկերության բարձրագույն մարմին։ Ցերը և ընդհանուր ժողովն իր իրավունքները տալիս լիազորների ժողովին։

Վարչությունը—կատարողական որգան (գործադիր մարմին) և։ Վարչության ընտրության կարգը, ժամկետը, կազմը (քանակը)։ Աշխատանքների բաժանումը վարչության անդամների մեջ. վարչության նիստերը։ Արձանագրությունների գիրքը և նրա կանոնավոր պահելու անհրաժեշտությունը։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Ցինդովատով.—Ինչ պիտք է իմանալ ընկերության կանոնադրությունից։
2. Միախանութ և բազմախանութ սպառողական ընկերությունների կանոնադրությունները։
3. Գյուղ. սպառկոոպ-վարչության առաջին քայլերը։
4. Գյուղական սպառ-կոոպերատիվի վարչությունը ինչպես պիտի կազմի իր հաշվետվությունը։

---

## ՈՒԹԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

(Շարունակություն)

### Ինչպես է կառավարվում սպառողական ընկերությունը

Հասարակական հսկողության կարևորությունը սպառողական ընկերությունների մեջ։ Վերստուգիչ հանձնաժողովը որպես ստուգող և վերահսկող մարմին։ Հանձնաժողովի կազմը, գործունեության կարգը, աշխատանքի բաշխումն անդամների մեջ, վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի միացյալ նիստերը։ Վերստուգիչ հանձնաժողովի փոխհարաբերությունները վարչության հետ։ Բողոքների ու գանգատների քննությունը։ Վերստուգիչ հանձնաժողովի յեզրակացություններ տալու կարգն ընկերության պլանի, նախահաշվի, տարեկան հաշվետվության ու գործող ապպարատի գործունեության վերաբերմամբ։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

Տես վերը, այլև

1. Խիժնյակով.—Սովորեցեք քննություն կատարել։
2. Հայկոոպի մի շարք շրջաբերականները վերստուգիչ հանձնաժողովներին։
3. Վերստուգիչ հանձնաժողովների կանոնադրությունը (ապակետիպ)։

---



## ԻՆՆԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

(Շարունակություն)

### Ինչպես է կառավարվում սպառողական ընկերությունը

Բազմախանութ սպառողական ընկերություններում անդամների շրջանային (հիմնարկային, ձեռնարկային, գործարանային) ընդհանուր ժողովները ու նրանց իրավասության սահմանները։ Խանութային հանձնաժողովները, նրանց դերը և գործունեության յեղանակները, փոխհարաբերությունները վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի հետ.հաշվետվության կարգը։ Համերաշխ պատասխանատվության սկզբունքը։ Տարեկան հաշվետվություն և գործունեության նախահաշիվ—պլան կազմելու կարգը։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

Տես 8 և 9 զրույցները, այլև

1. Ս. Դենիսով.—Կազմակերպեցեք խանութային հանձնաժողովները։
2. Խանութային հանձնաժողովների կանոնադրությունը։
3. Հայկոոպի մի շարք շրջաբերականները։

---

## ՏԱՍԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

### Սպառողական ընկերության խանութի սարք ու կարգը յեվ առեվտրի հիմնական սկզբունքները

Ինչպես պիտի սարքավորել կոոպերատիվ խանութը։ Գատասխանատու գործակատարի իրավունքներն ու պարտականությունները։ Կանխիկ և ապառիկ առևտուր։ Ապառիկ առևտրի ինամները։ Ապրանքների և խանութի պահպանումը ինասատուներից և խոնավությունից։ Խանութային հանձնաժողովների անելիքները խանութի ներքին սարքավորման, գների, ապրանքների տեսակների կանոնավորման և ընհանրապես առևտրի կազմակերպման գործում։ Բողոքների արկղների (կամ բողոքների դրքերի) դերը։ Նրանց մեջ յեղած տոմսակների քննության կարգը։ Սպառողական ընկերության աշխատակիցների վարձատրության խնդիրները։ Խանութի հաշվառման կարգը։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Գործակատարի հաշվառումը։
2. Կոոպերատիվ խանութի սարք ու կարգը։
3. Հ. Տ. Մ.—Ինչպես պիտի լինի գործակատարը կոոպերատիվում։
4. Հրահանգներ գործակատարին։
5. Հայկոոպի մի շարք շրջաբերականները։
5. Խիժնյակով.— Սովորեցեք քննություն կատարել (յերես 26—32)։

---



## ՏԱՍՆՅԵՎՄԵԿԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

### Սպառողական ընկերությունների բացերն ու պակասությունները

ա) Ապրանքների գների սխալ քաղաքականությունը (բարձր գներ և մեծ հավելումներ), բ) վարչությունների ձգտումը՝ տարեվերջին մեծ ոգուտներ ունենալ, գ) անհաշիվ (առանց նախահաշվի) ծախքեր, դ) հասարակական միջոցների ցրումը վարկավորման անվան տակ, յե) յուրացումներ և այլ կարգի չարաբկումներ (գողություն, թալան, պակասորդներ, ավելցուկներ), զ) վարչական ու տեխնիքական ապպարատի կոպիտ, անուշադիր և բյուրոկրատական վերաբերմունքը դեպի գյուղական մասսան, ե) վերստուգիչ ու խանութային հանձնաժողովները թույլ են գործում։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Տեղական և մոտիկ կոոպերատիվների մասին մեր թերթերում լույս տեսնող թղթակցությունները։
2. Հայկոոպի հրահանգները։
3. Գյուղթղթակիցների տրամադրության տակ յեղած նյութերը։
4. Հայկոոպի հրահանգչի համապատասխան նյութերը (գրավոր ցուցումներ)։
5. Տեղական պատի թերթերի նյութերը։

---

## ՏԱՍՆՅԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

(Շարունակություն)

### Սպառողական ընկերությունների բացերն ու պակասությունները

Ինչով են բացատրվում անցյալ զրույցում թված բացերն ու պակասությունները։ Պետք է փնտռել պատճառները և վերացնել այդ պատճառները։ ա) Հիմնական պատճառը—կոոպերացիայի անդամների անտարբերությունն և անկազմակերպ լինելը. բ) յերկրորդ պատճառը—սպառկոոպի ապարատի անհաջող կազմը (անհարազատ ծառայող, վատ հաշվապահ, անփորձ վարչական ապարատ և այլն) և վերջապես հընարավոր է գ) տեղական հասարակական կազմակերպությունների (մասնավորապես Կուս ԼԿՅԵՄ բջիջների) վոչ ուժեղ ղեկավարությունը և սպառկոոպի ընտրովի ու վարձու տեխնիքական ապարատի հետամնաց ու անպատրաստ լինելը։ Սպառողական կոոպերացիան համապատասխան միջոցների յե ձեռնարկում. ա) կազմակերպում է կոոպերացված մասսաների լայն ինքնագործունեությունը համաձայն կուսակցական ու կոոպերատիվ կենտրոնների հրահանգների. բ) կազմակերպում է կոոպերատիվի շուրջը կոոպերատիվ ակտիվը վորպես խորհրդակցական ու ոժանդակ մի մարմին. գ) մասնակցում է կոոպերատիվ խորդակցությունների, համագումարների ու կոոպերատիվ վերապատրաստման դասընթացքներին. դ) ուժեղացնում է իր կապը Կուս և ԼԿՅԵՄ բջիջների, կուսակցական ու կոոպերատիվ ավելի բարձր մարմինների հետ՝ ղեկա-



վարվելով վերջիններիս ցուցումներով ու հրահանգներով. և յե) տնտեսական-առևտրական գործունեության զուգահեռ տանում է մասսայական կուլտ-կրթական աշխատանքներ։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ. (Տես վերը)։

---

## ՏԱՍՆՅԵՐԵՔՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

### Կոոպերացված մասսաների ակտիվացման խնդիրները

Մասսաների ակտիվ ինքնագործունեությունը—այժմեական մի լոզունգ է մեր շինարարության բոլոր ընդգավառներում. ինչպես պիտի կազմակերպել ու ղեկավարել այդ ինքնագործունեությունը սպառողական կոոպերացիայում։ Մենք ցույց կտանք մասսաների ակտիվացման գլխավոր ձևերը. տեղերում կարելի յե այն ավելի կոնկրետացնել. ա) վարչության և վերստուգիչ հանձնաժողովի դոնբաց նիստերը և ինֆորմացիոն զեկուցումները կոոպերատիվի ընթացիկ աշխատանքների մասին. բ) խանութային հանձնաժողովների աշխատանքների ղեկավարության ուժեղացումը վարչությունների կողմից. գ) կոոպերացիայի կուլտ-կրթական աշխատանքների ուժեղացումը և կենտրոնացումը վարչության կից կուլտ-հանձնաժողովների ձեռքում. դ) կոոպերատիվ խմբակի ու ակտիվի կազմակերպումը. յե) գիրք և գրենական պիտույքների վաճառքի կազմակերպումը. զ) աշխատակիցների վերապատրաստման ու պատրաստման դաս-

ընթացքների կուրսանտներ ուղարկելը. ե) կոոպ-լուսավորության մասսայական ձևերի լայն կիրառումը յերեկույթների, ներկայացումների, կինոյի, մոգական լապտերի, ռադիո-զրույցների կազմակերպումով։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

Տես վերը այլ և

1. «Հայաստանի կոոպերացիայի» № № ները 1925—26—27 թ.
2. «Կոոպերացիա» ամսաթերթը. № №1, 2, 3, 4 և այլն (լույս են տեսնելու)։
3. Հայկոոպի ղեկավար հրահանգները և շրջաբերականները։

---

## ՏԱՍՆՉՈՐՍՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

## Կոոպերատիվ հասարակայնության խնդիրները գյուղում

Հիմնական խնդիրը դասակարգային ճիշտ ղեկավարությամբ չքավորների ու միջակների գործնական միությամբ չեզոքացնել գյուղի կուլակին ու չարչուն։ Չքավորների կոոպերացման խնդիրը և նրա իրականացման յեղանակները։ Չքավորների կոոպերացման ֆոնդերը. ինչ աղբյուրներից են նրանք կազմվում. ա) սպառողական կոոպերացիայի ոգուտներից տոկոսային հատկացումներից. բ) փոխադարձ ոգնության կոմիտեների յերկարատև վարկերից. գ) կոոպերատիվ կենտրոնների կողմից արվող վարկերից։ Ի՞նչպես ոգտագործել այդ



ֆոնդերը։ Չքավորական մշտական ժողովների կազմակերպումը կոոպերատիվի ընդհանուր կամ լիազորական ժողովներին կից։ Կազմակերպված չքավորությունը միջակ գյուղացիության հետ ապահովում է կոոպերատիվ աշխատանքի լավ վորակը։ Արտոնություններ չքավորների կոոպերացման համար։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Չքավորների կոոպերացման ֆոնդերի կանոնադրությունը։
2. Մի շարք շրջաբերականներ չքավորների կոոպերացման մասին։
3. «Չքավորների կոոպերացման յերկշաթյակ»-ին նվիրված մի շարք հոդվածներ և թերթներ «Խորհրդ. Հայաստանում», «Մաճկալում» և այլ թերթերում։

---

## ՏԱՍՆՅԵՎՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

(Շարունակություն)

## Կոոպերատիվ հասարակայնության խնդիրները գյուղում

Կանանց կոոպերացման կարևորությունը։ Արտոնություններ կանանց անդամագրությունը սպառողական-կոոպերացիային հեշտացնելու համար. կանանց առաջ քաշման խնդիրը սպառողական կոոպերացիայի մեջ. (խանութային հանձնաժողովների վարչության, վերստուգիչ հանձնաժողովների և աշխա-

տող ապարատի մեջ։ Ցերիտասարդության կոոպերացումը—Խորհրդային որենսդրությունը թույլ է տալիս նույնիսկ 16—18 տարեկաններին ընդունել կոոպերացիայի շարքերը։—արտոնություններ։ Կապ ԼԿՅԵՄ-ի և կոոպերացիայի մեջ։ Գյուղի կուսակցական բջջի, գյուղխորհրդի ու ՓՈԿ-ի վերնահարաբերությունները։ Խրճիթ-ընթերցարանները, խրճիթներն ու սպառկոոպի կոոպ-խմբակը։ Հասարակայնության կազմակերպչական խնդիրներն ու անելիքները։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. 16—18 տարեկանների կոոպերացման մասին Հայկոոպի շրջաբերականը։
2. Խրճիթվարներին տրվող հրահանգները գլխքաղուսավարի գծով։
3. ԼԿՅԵՄ և ՀԿԿ կուսակցական մարմինների համապատասխան բանաձևերը ու նյութերը։

---

## ՏԱՍՆՅԵՎՎԵՑԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

## Սպառողական կոոպերացիայի կառուցվածքն ու նվաճումները

Սպառողական կոոպերացիան Հայաստանում նախքան խորհրդայնացումը և խորհրդայնացումից հետո։ «Հայկոոպը»—սպառողական կոոպերացիայի կենտրոն, Ի՞նչու յե անհրաժեշտ կոոպերացիային կենտրոններ ունենալը։ Հայկոոպի դերը, նրա տնտեսական ու կազմակերպչական դեկավարությունը։ Թվական տվյալներ



ՀՍԽՀ սպառողական կոոպերացիայի զարգացման ու նվաճումների մասին։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Գ. Պիճիկյան.—Հայաստանի սպառկոոպերացիայի պատմությունը։
2. Գ. Ստամբոլցյան.—Սպառկոոպերացիան և նրա խնդիրները։

---

## ՏԱՍՆՅԵՎՅՈԹԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

## Սպառողական կոոպերացիայի կառուցվածքն ու նվաճումները

(Շարունակություն)

Սպառողական կոոպերացիայի Անդրկովկասյան կենտրոնը—«Զակոյուզ»։ Համամիութենական սպառողական կոոպերացիայի կենտրոնը—«Ցենտրոսոյուզ»։ Հայկոոպի և մեր սկզբնական կոոպերատիվների կազմակերպչական ու տնտեսական կապերն այդ կենտրոնների հետ։

Միջազգային կոոպերատիվ միությունը—«Ալյանս»։ Մեր և բուրժուական յերկրների կոոպերատորների տարաձայնություններն ու աշխատանքի մեթոդների տարբերությունը։ Հայկոոպը—Ալյանսի անդամ է։ Կոմինտերնին կից կոոպերատիվ սեկցիան և նրա դերը միջազգային մասշտաբով խորհրդային կոոպերատորների (կոմունիստ կոոպերատորների) կազմակերպման գործում։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

Տես վերը, այլև

1. Լինտվարյով.—Կոոպերացիայի այբուբենը (յերես 429—438)։
2. Մեշչերյակով.—Ժամանակակից կոոպերացիան (գլուխ Ի)։

---

## ՏԱՍՆՅԵՎՈՒԹԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

## Սպառողական կոոպերացիայի հերթական խնդիրները

Գների իջեցումը վորպես հերթական և չվերջացրված աշխատանք։ Տվյալներ 1926—27 թվերի գների իջեցման հետևանքների մասին։ Սպարատի ճկունացումը. ծախքերի ու հավելումների կրճատում, տնտեսումի ռեժիմ, վարկով առևտրի սահմանափակում։ Նոր կոոպերատիվների ու նոր բաժանմունքների բացումը։ Կոոպերատիվ անապատների վերացում։ Փայադրամագլխի գանձումը։ Կոոպերացիայի սեփական միջոցների կուտակման անհրաժեշտությունը։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.

1. Գ. Ստամբոլցյան.—Հայաստանի սպառկոոպերացիան և նրա անելիքները։
2. «Կոոպերացիա» ամսաթերթի №№ 1, 2, 3—4 և հետևյալները։
3. Հայկոոպի ընթացիկ շրջաբերականները։

---



## ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՈՒ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Ընդհանրացումներ և ամփոփումներ։ Ստուգումի և հարց ու պատասխանների յերեկոներ։

---

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներկա ծրագրի մեջ մենք գլխավորապես տվել ենք սպառողական կոոպերացիային վերաբերվող զրույցների սխեմա։

2. Յեթե պարապմունքները շաբաթական յերկու անգամ են, առաջին, յերկրորդ և յերրորդ զրույցները կարելի յե մանրամասն զարգացնել և դարձնել 8—10 պարապմունքի նյութ։

3. Չորրորդ զրույցից սկսած մինչև 15-ը պետք է պարապմունքները գործնականորեն կապել տեղական կոոպերատիվի ընթացիկ կյանքի հետ՝ ծանոթանալով ու քննադատությունի յենթարկելով վերջինիս բացերը և միջոցներ առաջարկելով այդ բացերը վերացնելու։

4. 16—17 զրույցների համար հայերեն աղբյուրներ ձեռքի տակ չունենք։ Հավանական պիտի համարել, վոր կոոպերատիվ հրատարակչությունները մոտ ժամանակներս այս մասին կմտածեն։ Միաժամանակ պետք է հուսալ, վոր Հայկոոպի կազմ-բաժինն այս մասին կտա համառոտ թեզիսներ զեկուցողների համար, այլև կոգտագործի «Կոոպերացիա»-յի եջերը նույն նպատակով։

5. 18, 19 և 20-երորդ զրույցները պիտի ամփո-

փեն անցած բոլոր դրույցները։ Ցեթե կոոպերատիվ խմբակի ժամանակը ներում է, այդ դրույցները պիտի զբաղեցնեն խմբին ավելի շատ (5—10 պարապմունք)։

6. Այս սիստեմատիկ պարապմունքներից անկախ կոոպխմբակի նախաձեռնությամբ կարող են լայն մասսայի ու կոոպերատիվ ակտիվի համար կազմակերպվել հատ-հատ հրապարակական դրույցներ, դեկուցումներ և դասախոսություններ առանձին նյութերի մասին։ Այդպիսի հրապարակական դրույցների, զեկուցումների և դասախոսությունների թեզերն ու նյութերը մշակվում են Հայկոոպի կազմ-բաժնի կողմից ու մտնում են նրա շրջիկ հրահանգիչների և այլ պատասխանատու աշխատակիցների աշխատանքային ծրագրի մեջ։

7. Բանվորական կոոպերացիայի ու գինվորական կոոպերացիայի մասին տալիս ենք այս ծրագրին լրացուցիչ մի քանի դրույցների թեմաներ և գրականության ցանկ։

---

Հավելված Գ.

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտ է, որ ներկա ձեռնարկով ոգտվող կոոպխմբակավարները և կոոպլուսաշխատանքները վարող հանձնաժողովները ի նկատի առնեն ա) որ վերև բերած որինակելի ծրագիրը յուրաքանչյուր դեպքում պիտի հարմարեցնել տվյալ պայմաններին, խմբակա-



վարի պատրաստության աստիճանին, խմբի մեջ մըտնողների մտավոր մակարդակին և պարապմունքներին անհրաժեշտ գրականության ու թերթերին. բ) որ համենայն դեպս, գյուղական կոոպերատիվներին—վերոհիշյալ որինակելի ծրագիրը կարող է ընդհանուր առմամբ հիմք ծառայել շատ չնչին լրացումներով ու փոփոխություններով և գ) որ քաղաքներում կազմակերպվող խմբերի պարապմունքների ծրագրի խնդիրն ավելի բարդ է և յուրաքանչյուր առանձին դեպքում կախված է մի շարք տեղական պայմաններից։

Այդ իսկ պատճառով մենք ստորև բերում ենք քաղաքային տիպի խմբերի համար (բանվորական և զինվորական) մի շարք նյութերի ցուցակ վորոնց շուրջն այդ խմբակները պետք է պարապվեն վորպես լրացում և զարգացում մեր որինակելի ծրագրերին։ Միաժամանակ մենք կցում ենք ռուսերեն աղբյուրների մի ցանկ, վոր կարևոր պիտի համարել այդ խմբերի համար վորպես պարապմունքները հեշտացնող աղբյուրներ, (լրացում հայերեն ցուցակին. տես յերես 48)։

---

## ԱՌԱՆՁԻՆ ԹԵՄԱՆԵՐ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Բանվորական կոոպերացիայի կազմակերպչական խնդիրները։

2. Բանվորական կոոպերացիայի տեղը սպառողական կոոպերացիայի սիստեմայում։

3. Ցենտրոսոյուզ և Ցերաբսեկցիա։

4. Բանվորական կոոպերացիայի պատմությունն ու ներկա դրությունը։

5. Բանվորական կոոպերացիան և արհմիությունները։

6. Ինչպես և կազմակերպվում սպառողական կոոպերացիայում կարմիր բանակը։

7. Բանվորական կոոպերացիան և նոր կենցաղը։

8. Սննդամատակարարման գործը և բանվորական կոոպերացիան։

9. Բանվորի բյուջեն և սպառողական կոոպերացիան։

10. Բանվորական կոոպերացիայի հաստրակայնության խնդիրները։

11. Բանվորուհին, կոոպերացիան և նոր կենցաղի խնդիրները։

12. Կուլտ-լուսավորական աշխատանքները բանվորական կոոպերացիայում։

13. Բանվորական կոոպերացիայի ֆինանսները։

14. Ցեղրափակում և ամփոփումներ։

---

## Ռուսերեն կոոպերատիվ գրականություն

*(Քաղաքային ակտիվ կոոպերատիվների համար)*

1. *Кожаный П.*—Рабочая кооперация за 10 лет Советской власти.

2. *Витольд Х.*—Как управляется рабочий кооператив.

3. *Плотников И.*—Торгово-финансовый план рабочего кооператива.

4. *Эдельман С.*—Уполномоченный ЦРК и его работа.



5. *Эльдеман С.*—Кооперация к 10-летию Октября.

6. *Гудков А. А.*—Организация и практика рабочих потребительских обществ.

7. *Макерова Н.*—История русской потребительской кооперации.

8. *Любинский Е.*—История западно-европейской кооперации.

9. *Биттель*—Кооперативный интернационал и его проблемы.

10. *Целлариус*—Кооперация и борьба за социализм.

11. *Балабанов*—История рабочей кооперации.

12. —Кооперативный кружок в рабочем клубе.

13. —Беседы о рабочей кооперации.

14. *Некрасов*—Кооперативная торговля, часть I и II.

---

## Վ. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԿՈՈՊԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Առաջին չորս գլուխներում բերված մեր բոլոր գործնական ցուցումներն ու խորհուրդները կենսագործելը կախված է կոոպերատիվ խմբակավարից։ Թե խմբակի բյուրոն, թե կոոպերատիվի վարչությունը և թե Հայկոոպի հրահանգիչը—խմբակի դաստիարակչական-մասսայական աշխատանքների համար վերջին հաշվով ունեն ոժանդակ խորհրդակցական բնույթ։ Իսկական աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարությունը ամբողջովին կախված է կոոպխմբակավարից։

Հենց այդ պատճառով է, որ խորհրդային կոոպերացիայի գործնականում մի շարք տեղերում կոոպխմբակավարը կոչվում է կոոպխմբակի պատասխանատու քարտուղար։ Վերջինիս աշխատանքի վարակից է կախված (գոնե սկզբի ամիսներում) կոոպերատիվ խմբակի կազմակերպման ու աշխատանքների կանոնավոր հիմքերի վրա դնելու հաջողությունը։ Կոոպխմբակավարը (կամ կոոպխմբակի պատասխանատու քարտուղարը) անպայմանորեն պետք է քաղաքականորեն ու կոոպերատիվորեն պատրաստված լինի, այլապես կոոպերատիվ խմբակի պարապմունքները հենց սկզբից դատապարտված են անհաջողության։ Անկախ դրանից կոոպերատիվ խմբակավարը պետք է ժամանակ ունենա



ոչ միայն խմբակի աշխատանքները ղեկավարելու, այլ և այդ աշխատանքների ղեկավարման համար ինքը նախապատրաստվելու՝ կարդալով համապատասխան գրքեր ու թերթեր, ծանոթանալով առաջադրվող խնդիրների հետ գործնականում և բանավոր ու գրավոր կապ պահելով թե կոոպերատիվի վարչության, թե կոոպերատիվ կենտրոնների և թե կոոպխմբակին մոտ կանգնած շահագրգռված այլ կազմակերպությունների ու հիմնարկների հետ (կոմ. ու կոմյերիտ բջիջների, ՓՈԿ-ի, չքավորական խմբակի, բատրակ-կոմի, խրճիթ-ընթերցարանի և այլն)։ Վերջապես անհրաժեշտ է, որ կոոպխմբակավարը կարողանա գործնական ղեկավարությունը այնպես տանել, որ կոոպխմբակը որոշ ծրագիր գործնականորեն մշակելուց և անցնելուց հետո կարողանա խմբակից ստեղծել կոոպերատիվ իրական հասարակայնություն կամ «կուլտուրական կոոպերատորների» խմբակ։ Այդ խմբակիցն է, որ հետո ստեղծվելու է «կուլտուրական կոոպերատորների» հասարակակարգ։

Կոոպերատիվ խմբակավարի գործնական աշխատանքների համար ավելորդ չենք համարում ստորև բերել հետևյալ գործնական ցուցումները։

### ա) Ինչպես տանել պարապմունքները

1. Զպետք է յերկար դասախոսությունների ձևով անցկացնել խմբակի պարապմունքները։ Խմբակի պարապմունքները պիտի ունենան զրույցի բնույթ, ըստ որում ծրագրված զրույցն անց է կացնում խմբակավարը 25—40 րոպեի ընթացքում և ա-

պա զրույցի շուրջը տեղի յեն ունենում մտքերի փոխանակություն։ Խմբակավարը ղեկավարում է մտքերի փոխանակությունը, հնարավորին չափ ձեռնպահ մնալով ինքը խոսելուց և միայն վերջում ամբողջ պարապմունքն ամփոփում է 10—15 րոպեյում։

2. Զրույցի ավելի նպատակահարմար ձևն է հարց ու պատասխաններով տարվող խմբակային պարապմունքները։ Այս դեպքում խմբակավարը և խմբակի անդամները ծրագրված նյութերի շուրջը մի շարք կոնկրետ հարցեր են դնում, այդ հարցերի շուրջը սառջին հերթին արտահայտվում են խմբակի անդամները։ Ցեվ վերջում միայն խմբակավարը ամփոփումներ է անում—գործնական առաջադրություններ։

3. Սակայն այս դեպքում իսկ (յերբ պարապմունքները տարվելու յեն հարց ու պատասխաններով) խմբակավարը պետք է 10—15 րոպեյի ընթացքում իր ներածական խոսքն ասի, այսինքն հենց սկզբից նա պետք է կարողանա խմբակի անդամների առաջ դնի որվա ծրագրային պարապմունքի խնդիրները, պարզ ու վորոշ գծագրելով խնդրի սահմանները և ամեն կերպ խմբակի ակտիվությունը ձգտելով դուրս չթողնել այդ սահմաններից։

4. Անհրաժեշտ է, վոր խմբակավարը հարցերը դնելուց չդիմի խմբակի առանձին անդամներին, այլ ամբողջ խմբակին։ Ցեվ պատասխանների սպասի վոչ թե խմբակի ավելի ակտիվ ու պատրաստված անդամներից այլ առաջին հերթին խմբակի այն անդամներից, վո-



րոնք քաշվող ընավորություն ունեն և իրենց մտքերը ձևակերպելու համար դեռ այնքան սովոր չեն։

5. Կարող է պատահել վոր խմբակավարի արած հարցին խմբակից վոչ վոք չկարողանա պատասխանել, այս դեպքում խմբակավարը հարցը յերկրորդ անգամ է դնում, ավելի վորոշ, ավելի հասկանալի ձևով, որինակներով իր հարցը մատչելի յե դարձնում։ Ցեթե նա նկատում է, վոր դարձյալ հարցը անպատասխան է մնում և՝ խմբակի անդամների մեջ ակտիվ վերաբերմունքը դարձյալ բացակայում է, այս դեպքում նա արդեն դիմում է խմբակի առանձին անդամներին, (և դարձյալ վոչ խմբակի ուժեղ անդամների թվից !)։

6. Անհրաժեշտ է հարցերն այնպես դնել, վոր նրանք խմբակի անդամների ուղեղի մեջ առաջ բերեն ակտիվ մտածողություն, աշխատանք, հարցասիրություն, և պատասխանելու ցանկություն. որինակ յերբ դուք հարցն այսպես դնեք. «մասնավոր առևտուրն է լավ թե՞ կոոպերացիան»— խմբակի անդամների մեջ հարցի այնպիսի դրությունը չի առաջացնի վոչ մի մտավոր աշխատանք կամ նոր բան սովորելու հնարավորություն։ Այլ բան է, յեթե դուք նույն հարցը կոնկրետացնեք ու տաք մի շարք հարցերի ձևով. որինակ. «Ձեր գյուղում մինչև խորհրդայնացում կոոպերատիվ կա՞ր»։ «Ո՞վքեր եյին կոոպերատիվի ղեկավարները», «կոոպերացիայի կողքին մասնավորներն ի՞նչպես եյին զգում իրենց»։ «Այժմ ինչպես են մասնավորներն աշխատում» և այլն, և այլն։

7. Ամեն կերպ պետք է խուսափել հարցերի ընդհանուր վերացական դրությից։ Որինակ՝ յե-

թե դուք հարցը դնեք այսպես՝ «ինչով և տարբերվում բուրժուական կոոպերացիան խորհրդային կոոպերացիայից»— պատասխանը ավելի դժվարությամբ կըստանաք քան յեթե դուք հարցերի միջոցով համեմատության դնեք մինչխորհրդային աշխատանքը, կառուցվածքը, սոցիալական կազմը և այլն ներկայիս դրության հետ։ Այս դեպքում խմբակի անդամն ինքն և այդ համեմատությունն անում և յեզրակացությունների հանգում։

8. Նախքան պարապմունքը խմբակավարը պետք է ինքը լավ նախապատրաստվի և միաժամանակ նախապատրաստի խմբակի անդամներին տալով նրանց համապատասխան ղեկավար ցուցումներ, գրքեր և ոգտագործելով ծրագրված պարապմունքների համար համապատասխան աղբյուրներ։

9. Պարապմունքների գործնական բովանդակություն տալը, եքսկուրսիաները, խմբական հետազոտությունը տեղի և մոտերքում գտնվող այլ կոոպերատիվում,—այս և նման աշխատանքները և պարապմունքները շատ են նպաստում խմբակի անդամների կոոպերատիվ խնդիրներում զարգացման գործին։

10. Խմբակի անդամներին յերբեմն շատ ոգտակար է կոնկրետ հանձնարարություններ տալ որին. գրավոր պատմել վորևե զրույցի բովանդակություն, այցելել կոոպերատիվի գրասենյակը կամ խանութը և ծանոթանալ վորևե կոնկրետ խնդրի հետ։ Անհրաժեշտ է վոր խմբակավարը նման հանձնարարությունները անի խմբակի անդամների իրական ուժերը



հաշվի առնելով և նրանց ուժերից վեր աշխատանք չտալով։

11. Անհրաժեշտ է վերջապես, վոր կոոպխմբակը հենց իր գործունեության սկզբից ընտրի կոոպերատիվ թղթակից։ Խմբակավարի ղեկավարությունը այս խնդրում պետք է արտահայտվի վոչ թե կոոպերատիվ թղթակցի գրությունների ձևական քննադատությամբ, այլ վոր կոոպթղթակիցը իր գրություններում վորպես կոոպերատիվ տեղեկատու հարցերը դնի գործնական հողի վրա, անի կոնկրետ առաջարկներ և խուսափի ամեն կերպ անձնական մոտեցումից։ Ուրիշ խոսքով ասած կոոպթղթակիցը կոոպխմբակավարի ղեկավարությամբ պետք է դաստիարակվի և զարգանա, և վոչ թե դառնա նրա հլու կամակատարը։

12. Յեթե կոոպխմբակը իր աշխատանքների ընթացքում այնպիսի նվաճումներ ու հաջողություններ ունենա, վոր նրա ակտիվ անդամների մեծամասնությունը (կամ մի զգալի մասը) հարց բարձրացնի կոոպերատիվ պատի թերթ հրատարակելու մասին՝ խմբակավարի անելիքն է այս խնդրում ա) հաշվառել խմբակի ուժերը, բ) ղեկավարել նախապատրաստական աշխատանքները, գ) կազմել նախահաշիվ և այլն, և ապա կոոպերատիվ պատի թերթի գործը հանձնարարել խմբակի կողմից ընտրված խմբկոլին։

13. Կարող է հարց ծագել նույնպես գոյություն ունեցող պատի թերթերում կոոպերատիվ սյունյակ ունենալու մասին. խմբակավարը և կոոպթղթակիցն անշուշտ այդ սյունյակի թե խմբա-

գրման, թե տեխնիքական կազմակերպման խնդիրներին ակտիվ մասնակցություն են ունենում և գաղափարականորեն այն ղեկավարում են։

14. Խմբակավարը պիտի առաջ քաշի նաև ուժեր, որոնք կարող կլինեն կոոպերատիվ կյանքը դիագրամմաներով ներկայացնել, այլ և սարքավորել կոոպերատիվ անկյուններն ու նրանց կից գրադարանները։

---

## VI. ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՆԿՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

Կոոպխմբակի պարապմունքի հաջողության նախապայմաններից մեկն է նաև կոոպանկյան սարքավորումը և ընդհանրապես կոոպխմբակի պարապմունքների վայրի նպատակահարմարությունը ծրագրված աշխատանքների համար։ Ինքնին հասկանալի է, որ կոոպերատիվ խմբակը պետք է ունենա իր պարապմունքների համար մի մշտական վայր։ Տեղից-տեղ փոխադրվելը, այլև պարապմունքների վայրի վատ և անուշադիր սարքավորումը միշտ էլ բացասական ազդեցություն պիտի թողնի խմբակի պարապմունքների արդյունքների վրա։ Հենց այդ պատճառով է, որ մենք նախընթաց գլուխներից մեկում խորհուրդ էինք տվել կոոպխմբակի կազմակերպչական նախապատրաստական շրջանում վորոշել, թե կոոպխմբակը որ հիմնարկին կամ ձեռնարկին կից է կազմակերպվում։

Ի՞նչ է պահանջվում գյուղական կոոպխմբակի պարապմունքների վայրի սարքավորման համար։ Այստեղ մենք միայն ընդհանուր ցուցումներ կտանք. տեղերի նախաձեռնությունը և կոոպխմբակների դրամական միջոցները միայն կարող են մեր ընդհանուր ցուցումներն այս կամ չափով հաջողությամբ կամ կիսահաջողությամբ իրականացնել։

1. Կոոպխմբակին պիտի տրամադրվի առանձին սենյակ կամ վորևե սենյակի (դպրոցի դասարանի, խրճիթ-ընթերցարանի, կոոպերատիվի գրասենյակի և

այլն) մի անկյունը։ Այդ անկյունը պիտի անպայման լուսավոր լինի, իսկ յերեկոյան պարապմունքների համար պիտի ունենա առաստաղից կամ պատերից կախված ճրագներ, այնքան վոր կոոպանկյունում լինի բավականաչափ լույս պարապմունքների համար։

2. Կոոպերատիվ անկյունը պիտի կահավորել պարզ ու հասարակ կահավորությամբ։ Անհրաժեշտ պիտի համարել հետևյալ առանձին առարկաները՝ ա) մի պահարան կոոպխմբակի գրականությունը, թերթերը և այլ ձեռնարկները կողպեքի տակ պահելու համար, բ) նստարաններ, աթոռներ կամ հասարակ տաբուրետկաներ 20—30 հոգու համար (խմբակի անդամների քանակին համապատասխան այդ թիվը կարելի յե փոփոխության յենթարկել), գ) մի մեծ սեղան (խմբակի անդամներին նրա շուրջը տեղավորելու չափով) պարապմունքների համար։ Այս բոլոր կահավորությունը կարժենա, նայած առարկաների վորակին, 75—150 ռուբլի, և անհրաժեշտ է ընտրությունը կատարել ու գնումն իրականացնել ըստ կոոպխմբակի նախահաշվային հնարավորությունների։

3. Կոոպերատիվ անկյունն անհրաժեշտորեն, բացի համեստ կահավորումից, պիտի զարդարված լինի այնպես, վոր անկյան հաճախորդներին տա թե գեղարվեստական վորոշ բավարարություն, թե մտքի աշխատանք և թե կոոպերատիվ խմբակի պարապմունքների ընթացիկ բովանդակության համապատասխան նյութեր։ Ցեվ այդ բոլորը պիտի ունենան քաղաքական-կոոպերատիվ և վոչ ռեկլամային, վոչինչ չասող, թեքում։ Շատ չնչին միջոցներով (15—25 ռուբլով) կոոպերատիվ անկյան պատերին կարելի յե տալ



յանկալի և հետաքրքիր տեսք։ Պետք է գնել ա) խորհրդային կոոպերացիայի ու պետականության ղեկավարների մի քանի (3—5) նկարներ, բ) մի շարք գեղարվեստական-կոոպերատիվ պլակատներ և գ) կոոպերատիվ-քաղաքական լոզունգներ։ Առաջին և յերկրորդ գնումները հեշտությամբ կարելի յե իրականացնել Հայկոոպի կազմ-բաժնի միջոցով։ Լոզունգները պետք է աշխատել տեղում գծագրել տալ կոոպխմբակի անդամների ուժերով, մինչև վոր Հայկոոպի կազմ-բաժինը հրատարակության կտա հայերեն լեզվով և գուցե նաև պլակատներ։

4. Վերջապես անհրաժեշտ է ունենալ ա) քարտեզներ. բ) կոոպերացիայի զարգացման ու նվաճումների վերաբերմամբ հանրամատչելի դիագրամմաներ և գ) կոոպխմբակին անհրաժեշտ գրքեր, թերթեր և այլ ձեռնարկներ։

5. Ոգտակար պիտի համարել կոոպերատիվ անկյան սարքավորման, մաքրության ու ընդհանուր դրության հետևելու համար խմբակի անդամների հերթապահություն նշանակել պարապմունքների յերեկոներին. հերթապահները պետք է անկյունում լինեն պարապմունքներից գոնե 1/2 ժամ առաջ և հոգ պիտի տանեն կոոպանկյունը որվա պարապմունքներին հարմարեցնելու, լույսի, տաքության և այլ մանր խնդիրների մասին։

6. Կոոպերատիվ անկյունը պետք է սարքավորել ու աստիճանաբար (տարեց-տարի) ճոխացնել այնպես, վոր նա հետագայում դառնա գյուղի հասարակայնության ամենասիրած վայրը։ Հնարավոր պիտի համարել վոր որինակելի կոոպանկյուններն ու որինակելի խբը-

ձիթ-ընթերցարանները (իրենց աշխատանքների հեռանկարներով ու բովանդակությամբը շատ նման. վայրիր) — վերջի վերջո գործնական աշխատանքներում տանելով կուլտուրական մրցման գիծ կձուլվեն ու ի մի կամփոփվեն գյուղի կուլտուրական հեղաշրջման բոլոր աշխատանքների ղեկավարությունն ու կազմակերպումը։ Այս մտքով կոոպերատիվ խմբակավարը և խրճիթվարը պետք է տանեն համաձայնեցրված ու մեկը մյուսին լրացնող, մեկը մյուսի արածն ու անելիքը զարգացնող աշխատանք։

---

## VII. ՄԻ ՔԱՆԻ ԼՈԶՈՒՆԳՆԵՐ ԿՈՈՊԱՆԿՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Մեզ մոտ, իսկապես, քանի վոր պետական իշխանությունը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքին, քանի վոր այդ պետական իշխանության և պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզ մոտ իսկապես ազգաբնակության կոոպերացման խնդիրն է ծնացել։

Լենին. «Կոոպերացիայի մասին»

2. Ընկեր կոոպերատորներ, ամրացրեք բանվորների ու գյուղական չքավորության կապը գյուղի հետ։ Բարձր պահեցեք մեր մեծ ուսուցիչ Լենինի դրոշակը։

3. Լենինյան կուսակցության դրոշի տակ պաշտպանենք հոկտեմբերյան նվաճումները։

4. Հարստացրու կոոպերատիվիդ միջոցները. մուծիր լրիվ փայավճարդ, պահ տուր խնայած գումարդ քո ընտրած վարչությանը։

5. Բանվորուհի, գեղջկուհի, յերիտ-բանվոր, յերիտ-գյուղացի. դեպի կոոպերացիայի շարքերը — կառուցելու նոր կենցաղ։

6. Լենինյան ուղիներով, կոմ-կուսակցության դրոշի տակ, դեպի սոցիալիզմ։

---

# ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Կոոպերատիվ լուսավորության ֆրոնտում մեր աշխատողների համար մինչև այժմ հայերեն գործնական գրականություն չի հրատարակվել, բացակայել են նաև աշխատանքի համար հրահանգները ու ձեռնարկները։ Այս գրքույկը առաջինն է, որի մեջ ամփոփված են Ցենտրոսոյուզի ու մի շարք այլ հրատարակությունների տեխնիկական-գործնական ցուցումներն ու հրահանգները՝ հարմարեցրված մեր հնարավորություններին։

Ձեռնարկի կազմելուց ձեռքի տակ ունեցել և ոգտագործել ենք հետևյալ գրքույկները.

1. Кооперативный кружок в избе-читалне. հրատ. Центросоюз-ի 1925 թ. Մոսկվա։
2. Кооперативный кружок в рабочем клубе. հրատ. Центросоюз-ի 1925 թ. Մոսկվա.
3. Н. И. Озеров.—Кооперативный кружок в деревне. հրատ. Книгосоюза, Մոսկվա-Լենինգրադ 1926։
4. Մի շարք խորհրդակցությունների զեկուցումներն ու բանաձևերը կոոպլուսավորության մասին։
5. Կոոպերատիվ թերթերում լույս տեսած մի շարք գործնական բնույթ ունեցող հոդվածներ ու թղթակցություններ։

Ընկեր Ստամբոլցյանի հառաջաբանը դրված խնդրի հասարակական-քաղաքական նշանակությունը սպառում է։ Մեր աշխատությունը տալիս է գործնա-



կան-տեխնիկական խորհուրդներ ու ցուցումներ, կանոնադրություն և ծրագիր։

Պետք է կարծել վոր այժմ խոսքը և գործը կոոպերացիայի լուսավորության ֆրոնտում աշխատել ցանկացող կուսակցական, պրոֆեսիոնալ և կոոպերատիվ ակտիվինն է։

Դեպի կուլտուրական հեղափոխության ֆրոնտը —առաջին պատվավոր կոոպերատոր Վ. Լենինի ու նրա կուսակցության ցույց տված ուղիներով։

Հառաջ, ընկեր կոոպերատորներ։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Երես

Հառաջաբան . . . . . 5

I. Կոոպլուսով. աշխատանքների ձևերի մասին . 12

II. Կոոպերատիվ խմբակային աշխատանքների մասին . . . . . 20

III. Խմբակների կազմակերպման ու աշխատանքների ընդհանուր հիմունքները . . 23

Հավելվածներ

Կոոպխմբակի կանոնադրություն . . 27

Ինչպես կազմել կոոպխմբակի նախահաշիվ և հաշվետվություն . . . . 32

Որինակ Ա. նախահաշիվ . . . 34

» Բ. տեղեկատու քարտ . . 36

» Գ. արձանագրություն . . 38

IV. Կոոպխմբակի պարապմունքների կազմակերպչական խնդիրները . . . . 41

Հավելված Ա. Հայերեն և ռուսերեն գրականության ցուցակ. ծանոթություններով . 47

Հավելված Բ. Պարապմունքների որինակելի ծրագիր. (ծանոթություններով) . . . 53

Հավելված Գ. Բան. և դին. կոոպերատիվ խմբակների պարապմունքների մասին . . 72

V. Խորհուրդներ կոոպերատիվ խմբակավարներին 76

VI. Կոոպերատիվ անկյան սարքավորումը . 83

VII. Մի քանի լոզունգներ կոոպանկյան համար . 87

Ցեղրափակում . . . . . 88



ՀՀ Ազգային գրադարան

NL0208013

ԳԻՆԸ 65 ԿՈՊ.